

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ոչինչ Չէ Փոխուած՝ Ոմանց Ուղեղներուն Սէջ

Հայաստանի նախկին նախագահ Սերժ Սարգսեան խզելով իր լռութիւնը, անցեալ շաբաթ ելոյթ ունեցաւ Եւրոպական ժողովրդական Կուսակցութեան ամպիոնէն՝ քննադատելով երկրի Գործող Իշխանութիւնները:

«Իմ երկրում իշխանափոխութիւնը տեղի ունեցաւ բացառապէս խաղաղ ճանապարհով. Իմ նպատակը մէկն էր՝ թոյլ չտալ, որ մարդկային զոհեր լինէին եւ պետութիւնը զերծ պահել վտանգաւոր ցնցումներէ: Յեղափոխութեան անուան տակ իշխանութեան եկածներն իրականութեան մէջ անցած մէկուկէս տարուայ ընթացքում որեւէ յեղափոխական փոփոխութիւն կամ երկրի արտաքին ու ներքին օրակարգերի յեղափոխական բեկում չեն մտցրել, աւելին՝ երկրում ժողովրդավարութեանը սպառնացող վտանգաւոր զարգացումներ են տեղի ունենում, խաթարուել են սահմանադրականութեան հիմքերը, չի գործում իշխանութիւնների տարանջատման եւ հաւասարակշռութեան սկզբունքը: Բազմաթիւ փաստերով ակնյայտ խախտուած է դատական իշխանութեան անկախութիւնը, իրականացում են քաղաքական հետապնդումներ», - յայտարարած է Սերժ Սարգսեան:

Հաւատալու համար Սերժ Սարգսեանի խօսքերուն, մարդ պէտք էր անցնող քսան տարիներուն գտնուած ըլլար քոմայի մէջ՝ ամբողջութեամբ կորսնցուցած ինքնագիտակցութիւնը: Կուզենք յիշեցնել նախագահին, որ ինք չէ որ կամաւոր յանձնեց իշխանութիւնը, այլ ժողովուրդը խլեց գայն՝ երկարաշունչ պայքարէ ետք: Ինչ կը վերաբերի խաղաղ իշխանափոխութեան հարցին, այդ պարագային եւս որոշումը իրմէ կախեալ չէր այլեւս, երբ ամբողջ Հայաստանի ժողովուրդ՝ հիւսիսէն հարաւ, արեւելքէն արեւմուտք ընթոստութեան դրօշ պարզած էր եւ բռնի ուժի տարբերակը դադարած էր գործել ու դատապարտուած ծախողութեան եւ որեւէ նման փորձի պարագային, Սերժ Սարգսեան այսօր պիտի գտնուէր իր նախորդի կողքին՝ բանտախուցի մէջ:

Ինչ կը վերաբերի «ժողովրդավարութեան», «Սահմանադրական կարգի», «դատական իշխանութեան», «քաղաքական հետապնդումներու» մասին արտայայտուած մտահոգութիւններուն, այդ տեսակետը չեն բաժներ միջազգային իրաւապաշտպան կառոյցները, որոնք իրենց զեկոյցներով կու գան հակառակը փաստելու: Ամէնէն կարելոր, այդ տեսակետները չեն բաժներ Հայաստանի եւ սփիւռքի ժողովուրդի ջախջախիչ մեծամասնութիւնը:

Նոր իշխանութիւնները զերծ չեն թերութիւններէ եւ յաճախ կը գործեն

Շար.ը էջ 2

Լինտսի Կրահամ Արգելափակած է Հայոց Ցեղասպանութեան Ծանաչման Բանաձեւը՝ Սպիտակ Տան Խնդրանքով



Նոյեմբեր 13-ին Սպիտակ Տունէն ներս Թրամփ, Էրտողան, Կրահամ եւ ուրիշներ

Հանրապետական ծերակուտական Լինտսի Կրահամ, որ Նոյեմբեր 13-ին Սպիտակ Տան մէջ էրտողան-Թրամփի հանդիպումէն ետք Ծերակուտի մէջ արգելափակութիւնը ճանչցող բանաձեւին վրայ, խոստովանած է, որ այդ քայլին դիմած է Սպիտակ տան ցանկութեամբ:

Կրահամ axios-ի հետ զրոյցի ընթացքին պատմած է, որ Սպիտակ Տան բարձրաստիճան պաշտօնեան խնդրած է իրմէ երթալ Ծերակուտ եւ արգելափակել Հայոց Ցեղասպանութեան մասին բանաձեւը:

«Ես ըսի՝ ի հարկէ: Միակ պատճառը, որ ես ըրի այն էր, որ էրտողանը դեռ Ուաշինկթընի մէջ էր: Ես կը փորձեմ փրկել յարաբե-

րութիւնները, որքան որ հնարաւոր է», - ըսած է Կրահամ:

Հարցին, թէ ինքզինք անյարմար կը զգա՞յ Հայոց Ցեղասպանութեան բանաձեւը արգելափակելու համար, Կրահամ պատասխանած է. «Այո՛, որովհետեւ ես կը հաւնիմ Պոպ Մենենտերը: Ան տարիներ շարունակ կ'աշխատի այդ ուղղութեամբ: Ես յաջորդ անգամ չեմ պատրաստուիր առարկելու»:

Յիշեցնենք, որ Կրահամէն ետք ԱՄՆ Հայոց Ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւին վրայ Ծերակուտի մէջ երկրորդ անգամ ալ արգելափակումը դրուած էր: Այդ անգամ արգելափակումը կիրառուած էր ԱՄՆ ձորճիա նահանգի հանրապետական ծերակուտական Տէյվիտ Փերտիւ կողմէ:

ՍԴՀԿ-ի Հանդիպումը Արցախի Մշակոյթի Նախարար Նարինէ Աղբալեանի Հետ



ՍԴՀԿ պատուիրակութիւնը Արցախի հանրապետութեան մշակոյթի նախարար Տիկ. Նարինէ Աղբալեանի հետ

Հայաստան Համահայկական Հիմնադրամի տարեկան թեյեթոն-դրամաշաւաքի կապակցութեամբ այս օրերուն Լոս Անճելոս կը գտնուին Արցախի հանրապետութեան մշակոյթի նախարար Տիկ. Նարինէ Աղբալեան եւ Արցախի

առաջնորդ Գեր. Տ. Պարգեւ Արք. Մարտիրոսեան:

Օգտուելով այս բարեպատեհ առիթէն Երկուշաբթի, Նոյեմբեր 25, 2019 Ս.Գ. Հնչակեան կուսակ-

Շար.ը էջ 5

Փաշինեան. Դատական Համակարգը Վերէն Վար Պիտի Ենթարկուի Խորքային Փոփոխութիւններու

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը, ելոյթ ունենալով Մարդու Իրաւունքներու Պաշտպանի հաստատութեան 15-ամեակի առթիւ երկօրեայ միջազգային համաժողովի բացման, յայտարարած է, որ դատական համակարգը «վերէն վար պիտի ենթարկուի խորքային փոփոխութիւններու»:

Վարչապետը շեշտած է, որ 15 տարիներու ընթացքին մարդու իրաւունքներու պաշտպանի եւ իշխանութիւններու յարաբերութիւնները պարզ չեն եղած, ու թէեւ 2018 թուականի ոչ բռնի, թաւշեայ յեղափոխութեանն ետք իրավիճակ փոխուած է, լուծուած են համակարգային կարեւորագոյն հարցեր, առաջին անգամ խորհրդարանական ընտրութիւնները կատարուած չեն յարուցած ո՛չ հայաստանցիներու, ո՛չ միջազգային դիտորդներու մօտ, սակայն մարտահրաւէրներ ալ կան: Պէտք է ժողովրդավարութիւնը ամրապնդել, եւ կայացնել դատական անկախ համակարգը:

«Մեզ ամենեւին չի հետաքրքրում հսկողութեան տակ գտնուող դատական համակարգը: Մենք ընդհանուր առմամբ եւ սկզբունքորէն դէմ ենք վերահսկողութեան տակ գտնուող դատական համակարգ ունենալուն: Բայց երբ Հայաստանի Հանրապետութեան կառավարութիւնն ի ցոյց դրեց իր կամքը՝ գործնական եւ քաղաքական, հրաժարուել դատական համակարգի նկատմամբ վերահսկողութեան փորձից, պարզուեց, որ դա որոշակի դաշտ է բացում նրանց համար, ովքեր նախկինում վերահսկողութիւն ունէին դատական համակարգի նկատմամբ, եւ նրանք սա զնահատեցին որպէս հնարաւորութիւն, որ իրենք կարող են շարունակել վերահսկողութիւն սահմանել դատական համակարգի նկատմամբ՝ այսպիսով փորձելով յետ պտտել Հայաստանում տեղի ունեցած ժողովրդավարական փոփոխութիւնները: Այսօր յստակ արձանագրում եմ, որ Հայաստանում դատական համակարգը վերից վար պէտք է ենթարկուի խորքային, բովանդակային փոփոխութիւնների, այնպէս որ այդ դատական համակարգը լինի իրապէս անկախ, լինի Հայաստանում ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների պաշտպանութեան, օրինականութեան առանցքային հիմնարկներից մէկը», - իր խօսքին մէջ նշած է Փաշինեանը:

Վարչապետն արձանագրած է, որ Մարդու Իրաւունքներու Պաշտպանութեան գրասենեակը կայացած է, հակառակ որ 15 տարի առաջ կային յուստեսական գնահատականներ:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

**«Յայտնի Կենդանու Ականջում»
Ծուարածների Քարոզչութիւնը**

Վերջին օրերին իշխանութիւնների դէմ իրականացուող քարոզչութեան գինանոցում նոր կարգախօս է յայտնուել, որի հիմնական իմաստը սա է՝ «Հայաստանի շուրջ վտանգաւոր զարգացումներ են տեղի ունենում, իսկ մենք, յայտնի կենդանու ականջում քնած, հետեւում ենք Նիկոլի մէկ դերասանի թատրոնին»: Մառազմն այնտեղ է հասել, որ ՀՀԿ-ական նախկին պատգամաւորներին մէկն, ըստ հոլթեան, իշխանութիւններին ու հասարակութեանը մեղադրել էր, թէ ահա Երկիր մոլորակին հակապահանք երկնաքար է մօտենում՝ Քէֆոսի բուրգի մեծութեամբ ու եթէ հասնի մեզ՝ վիթխարի աւերածութիւններ կ'անի, իսկ մենք մանրմուկներ ենք քաղաքական շոտներով ենք զբաղուած: Դէ իհարկէ, եթէ Հայաստանում յեղափոխութիւն տեղի ունեցած չլինէր եւ Սերժ Սարգսեանն ու ՀՀԿ-ն մերժուած չլինէին, կամ երկնաքարը ՀՀԿ Գործադիր մարմնի որոշմամբ կը փոխէր իր շարժման ուղղութիւնը, կամ ՀՀ գինուած ուժերը «80-ական թուականների գէնքերով» կոչնչացնէին այն, կամ էլ, ծայրայեղ դէպքում, Սաշիկ Սարգսեանին կը խնդրէինք ու նա կը կիսէր երկնաքարը՝ դրանով իսկ նուազեցնելով հնարաւոր աւերածութիւնները:

Իսկ հիմա՝ աւելի լուրջ: Այո, Հայաստանի շուրջ իսկապէս վտանգաւոր իրադարձութիւններ են տեղի ունենում: Վրաստանում եւ իրանում ներքաղաքական իրավիճակը լարուած է, Ատրպէյճանն ակնյայտօրէն պատերազմի է պատրաստուում (ի դէպ՝ վերջին 25 տարիներին ոչ մի րոպէ չի դադարեցրել այդ աշխատանքները), Մերձաւոր Արեւելքում լարուածութիւնը չի թուլանում, Թուրքիան օրէցօր աւելի ու աւելի անկանխատեսելի է դառնում եւ այսպէս շարունակ: Հարց է ծագում՝ ինչպէ՞ս պիտի Հայաստանը դիմակայի այդ հնարաւոր մարտահրաւէրներին եւ ինչպէ՞ս էր դիմակայում նախկինում:

Այնպէս չէ, որ Սերժ Սարգսեանի օրօք իշխանութիւնները չէին գիտակցում հնարաւոր վտանգները եւ ոչինչ չէին ձեռնարկում: Իհարկէ՝ ձեռնարկում էին: Օրինակ՝ պիզնեսներն ու կապիտալը տեղափոխում էին արտասահման: Բայց մի քիչ էլ պետութեան մասին էին մտածում: Սերժ Սարգսեանն, օրինակ, նախագահ դառնալուն պէս փորձեց կարգաւորել հայ-թուրքական յարաբերութիւնները: Չստացուեց: Յետոյ փորձեց կարգաւորել դարաբաղեան խնդիրը՝ աննախադէպ գիշումներ խոստա-

նալով Ատրպէյճանին: Դարձեալ չստացուեց (նրանք աւելին էին ուզում): Յետոյ փորձեց Հայաստանը ԵԱՏՄ մտցնելով ստանալ Ռուսաստանի անվերապահ աջակցութիւնն ու պաշտպանութիւնը՝ ցանկացած իրավիճակում: Էլի չստացուեց (Ռուսաստանն արդէն ահա լի քանակութեամբ ժամանակակից յարձակողական սպառազինութիւն էր վաճառել Ատրպէյճանին ու նոյնիսկ յայտարարեց, որ պատրաստուում է էլի վաճառել): Երկրի ներսում էլ միասնութեան մասին խօսք լինել չէր կարող՝ ընտրակեղծիքներով ձեւաւորուած իշխանութիւններ, իշխանութիւնների նկատմամբ հանրային վստահութեան գրոյական մակարդակ, «գաղ մթնոլորտ» եւ արտագաղթ: Պարզասած՝ նախկին իշխանութիւնները հնարաւոր ֆորսմաժորներին դիմակայելու ուղղութեամբ առանձնապէս քայլեր չէին անում, արուած քայլերն էլ ձախողուել էին:

Իսկ ի՞նչ են անում այսօրուայ իշխանութիւնները: Հասկանալի է, որ, ասենք, Իրանի կամ Վրաստանի ներքաղաքական զարգացումների վրայ ազդելու հնարաւորութիւններ գործնականում չկան, Ատրպէյճանն էլ, ամենայն հաւանականութեամբ, աւելի կառուցողական չի դառնալու եւ շարունակելու է նախապատրաստուել նոր պատերազմի: Նման իրավիճակում Հայաստանի իշխանութիւնները հնարաւոր մարտահրաւէրներին դիմակայելու համար կարող են կատարել միայն հետեւեալ քայլերը. ապահովել ներհասարակական համերաշխութիւն՝ հիմնուած իշխանութիւնների նկատմամբ հանրային վստահութեան մեծ պաշարի վրայ, ամրապնդել բանակը (օրինակ՝ բանակում ծառայելն աւելի գրաւելի դարձնելու, աւելի ժամանակակից սպառազինութեան եւ սոցիալական աւելի ամուր երաշխիքներ սահմանելու միջոցով) եւ հայրուսական դաշնակցային հարաբերութիւնները դնել աւելի գործնական հիմքերի վրայ:

Համաձայնուէք, որ իշխանութիւնները հենց այս ուղղութիւններով էլ աշխատում են եւ արդէն իսկ որոշակի յաջողութիւններ են արձանագրել: Բազմաթիւ խնդիրներ, իհարկէ, դեռ կան, բայց որպէս կանոն՝ այս ուղղութեամբ խնդիրները երբեք էլ չեն աւարտուում: Բայց իշխանութիւններին մեղադրելը, թէ ոչինչ չեն անում, համաձայնուէք, առնուազանազան է: Եթէ անգամ այդ մեղադրանքների ետեւից երեւում են յայտնի կենդանու ականջները:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

Արթուր Վանեցեանն Այլ Կե՞րպ Կը Վարուէր. Ազնիւ Խաղի Սկզբունքը

ԱՐԱՍ ԱՄԱՏՈՒՄ

ԱԱԾ նախկին պետ, արդէն նաեւ ֆուտպոլի ֆեդերացիայի նախկին նախագահ Արթուր Վանեցեանն ակնյայտօրէն պատրաստուում է զբաղուել քաղաքականութեամբ, ինչի մասին նա բաւականին թափանցիկ ակնարկ է արել նաեւ իր վերջին հարցազրոյցում:

Այն, որ Վանեցեանը հրաժարական ներկայացրեց ֆեդերացիայի նախագահի պաշտօնից, նոյնպէս վկայում է թերեւս այդ մտադրութեան մասին, քանի որ լինել ֆեդերացիայում եւ քաղաքակա-

որոնք էապէս առնչուում են տեղեկատուութեան փակ շրջանակի, դա գործնականում նշանակում է թէ՛ «ֆէյր փլէյի»՝ արդար խաղի կանոնի խախտում, թէ՛ նաեւ ազգային անվտանգութեան ռիսկերի գնեցում, երբ այդօրինակ մեթոդաբանութեան եւ մարտավարութեան միջոցով ԱԱԾ նախկին պետը կարող է պարզապէս մանիպուլիացիայի ենթարկել քաղաքական եւ հանրային ամբողջ համակարգը:

Կայացած քաղաքական համակարգ, կարգաւորիչ ինստիտուտներ եւ մշակույթ ունեցող երկրներում խնդիրը «ինքնակարգաւոր-

Արտառոց է թերեւս այն, որ ԱԱԾ նախկին պետը քաղաքականութիւն իր մուտքը կամ մուտքի մասին ակնարկը ուղեկցում է բաւականին մտահոգիչ դիրքաւորումներով, որոնք կարող են շօշափել ազգային անվտանգութեան խնդիրներ

նութեան մէջ միաժամանակ՝ Վանեցեանի համար անկասկած չարմարաւէտ լինել չէր կարող:

Իսկ նա յայտարարեց, որ առաջիկայում որեւէ կապ չի ունենայ ֆեդերացիայի հետ:

Քաղաքականութեամբ զբաղուելը ցանկացած քաղաքացու իրաւունքն է՝ անկախ հանրութեան այս կամ այն գնահատականից: Ի վերջոյ՝ հանրային գնահատականի ռիսկը իր վրայ է վերցնում քաղաքականութեամբ զբաղուող ցանկացած գործիչ: Նաեւ միջազգային քաղաքականութիւնն ունի օրինակներ, երբ յատուկ ծառայութիւնների ղեկավարները կարող են զբաղուել քաղաքական գործունեութեամբ եւ անգամ դառնալ երկրի ղեկավար: Այստեղ էլ չկայ արտառոց ոչինչ: Արտառոց է թերեւս այն, որ ԱԱԾ նախկին պետը քաղաքականութիւն իր մուտքը կամ մուտքի մասին ակնարկը ուղեկցում է բաւականին մտահոգիչ դիրքաւորումներով, որոնք կարող են շօշափել ազգային անվտանգութեան խնդիրները:

Մասնաւորապէս, կայ թերեւս մի սկզբունք, որ յատուկ ծառայութեան կարգավիճակից քաղաքականութիւն անցնող որեւէ անձ՝ լինի նախկին ղեկավար կամ բարձրաստիճան պաշտօնեայ այդպիսի համակարգում, պէտք է որդեգրի մի յստակ սկզբունք՝ նա անցնում է քաղաքականութիւն, սակայն դրանից դուրս է թողնում յատուկ ծառայութեան ղեկավարի կամ պաշտօնեայի կարգավիճակում ունեցածը կամ տիրապետածը: Անշուշտ, նա չի կարող դա, այսպէս ասած, գլխից դուրս թողնել, սակայն խնդիրը մոռանալը չէ, այլ քաղաքականութեան մէջ կիրառման բացառումը: Մինչդեռ երբ, օրինակ, Արթուր Վանեցեանը հարցազրոյց է տալիս եւ բազմիմաստ ժպիտ եւ կիսախօսք պարունակող դիրքաւորումով խորհրդաւոր քող ստեղծում այնպիսի հարցերի հանդէպ,

մասն» մակարդակում է վաղուց, սակայն քանի որ Հայաստանն այդպիսին չէ, այստեղ շատ կարեւոր է դառնում անձի դերը, տուեալ դէպքում՝ ԱԱԾ նախկին պետի պատասխանատուութիւնն ու քաղաքական եւ պետական գիտակցութիւնը: Հակառակ պարագայում պէտք է գործեն պետական իրաւապահ մեխանիզմները՝ պետական անվտանգութիւնը քաղաքական հաւակնութիւններից պաշտպանելու համար: Մի՞թէ այլ կերպ կը վարուէր ինքը՝ Արթուր Վանեցեանը, ԱԱԾ պետի պաշտօնում գտնուելու պարագայում:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՄԱՍԻՍ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԳՆԱԿԵԱՆ
ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՂԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Ոչինչ Չէ Փոխուած՝ Ոմանց Ուղեղներուն Մէջ

Շարունակուած էջ 1-էն

սխալներ: Սակայն ինչ որ այսօր կը կատարուի Հայաստանի մէջ՝ ժողովուրդի կենսամակարդակի բարձրացման, կոռուպցիայի դէմ պայքարի, ժողովրդավարութեան ու ազատութիւններու ամրապնդման եւ այլ բնագաւառներէ ներս արժանի են գնահատանքի եւ քաջալերանքի:

Աւելի լաւ պիտի ըլլար, որ Սարգսեան օգտաբորոժելով առիթը, անդրադառնար իր օրօք գործուած սխալներուն եւ տեղի ունեցած անարդարութիւններուն, հայցելով ժողովուրդի ներողամտութիւնը ու

խոստանալով նոր էջ բացալ իր քաղաքական կեանքին մէջ:

Նախկին համակարգի ներկայացուցիչները իրենց պատկանող լրատուամիջոցներու լայն ցանցին միջոցաւ կը փորձեն համոզել հասարակութիւնը, որ թաւշեայ յեղափոխութեան ետք ոչինչ չէ փոխուած: Նոյն միտքը կը կրկնէ նաեւ Սերժ Սարգսեան: Լսելով անոր խօսքերը մենք եւս կու գանք այն համոզումին, որ իսկապէս ոչինչ չէ փոխուած, ոչ թէ Հայաստանի մէջ՝ այլ նախկին մերժուած իշխանութիւններու ուղեղներուն մէջ:

«ՄԱՍԻՍ»

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եթէ Գեորգ Կոստանեան 48 ժամէն Չներկայանայ, ՅՔԾ-ն Պիտի Գործէ Ըստ Օրէնքի

Եթէ 48 ժամուան ընթացքին նախկին դատախազ Գեորգ Կոստանեան չներկայանայ նախաքննական մարմնին, ապա Յատուկ Քննչական Ծառայութիւնը պիտի իրականացնէ օրէնքով իրեն վերապահուած գործողութիւնները, լրագրողներու հետ ճեպագրուցի ժամանակ ըսած է ՅՔԾ պետ Սասուն Խաչատրեան:

2008-ի՝ 10 մարտու կեանք խլած մարտեան իրադարձութիւնները քննող ՅՔԾ-ն որոշում կայացուցած է որպէս մեղադրեալ ներգրաւել նախկին Գլխաւոր դատախազ Կոստանեանը, որ արդէն երկու ամիս է կը բնակի եւ կ'աշխատի Մոսկուայի մէջ:

«Ազատութեան» հետ հեռախօսագրուցի ժամանակ Կոստանեան ըսած է, որ քննիչին ժամանակին յայտնած է, որ Մոսկուայի կ'աշխատի, դասընթաց կը վարէ, եւ պիտի վերադառնայ այն աւարտելէն ետք: Կոստանեան նաեւ ըսած է, թէ ՅՔԾ-ի դրսեւորած «հրատապուծութիւնը իրեն համար կանխատեսելի էր»՝ առանց նշելու սակայն, թէ այդ պարագային ինչու քայլեր չի ձեռնարկեր Հայաստանէն հեռու չգտնուելու համար. - «Եւ առնուազն կիսամեակն աւարտուելուց յետոյ, ես ինքս չէ՞ պատրաստակամութիւն յայտնեցի, որ ներկայանալու եմ: Եւ այս հրատապուծութիւնը ինձ համար կանխատեսելի էր, բայց ոչ ողջամիտ եւ ոչ նորմալ էր իրաւական տեսակէտից: 48 ժամուայ ընթացքում առարկայականօրէն հնարաւոր չէ ներկայանալ»:

ՅՔԾ-ը դեռ չէ մանրամասնած, թէ ինչ յօդուածներով որպէս մեղադրեալ ներգրաւած է Կոստանեան եւ ինչ խափանման միջոց պիտի ընտրէ: Սակայն Մարտ 1-ի գործով անցնող մէկ այլ նախկին բարձրաստիճան պաշտօնեայի՝ նախկին ոստիկանապետ Ալիկ



Նախկին դատախազ Գեորգ Կոստանեան

Սարգսեանին առաջադրուած մեղադրանքի մասին հաղորդագրութեան մէջ կը շօշափուէր նաեւ Գեորգ Կոստանեանի անունը:

2008-ին Մարտու իրաւունքներու եւրոպական դատարանէն ներս Հայաստանի կառավարութեան ներկայացուցիչ Գեորգ Կոստանեան չարաչահած է իր պաշտօնէական լիազօրութիւնները եւ նպատակ ունեցած է պարտակել 2008 թուականի Մարտ 1-ին եւ 2-ին Երեւանի մէջ ծաւալած իրադարձութիւններու ժամանակ ոստիկանութեան իրականացուցած անօրինական գործողութիւնները եւ Հայաստանի զինուած ուժերու օգտագործումը:

Ըստ ՅՔԾ-ի, Կոստանեան եւ այն ժամանակ նախագահի օգնական, իսկ 2008 թուականի Յունիս 2-էն՝ Ոստիկանութեան պետի տեղակալ Գեորգ Մհերեանը իրենց յանձնարարութիւններով ու ցուցումներով պաշտօնատար անձանց դրդած են չարաչահելու պաշտօնէական լիազօրութիւնները եւ կեղծած ապացուցանքներ:

Լեւոն Սարգսեանը՝ «Ալրաղացի Լիովիկը» Կալանաւորուած է Ռուսաստանի Մէջ

Ռուսաստանի դատարանը բաւարարած է «Ալրաղացի Լիովիկը» մականունով Հանրապետականի նախկին պատգամաւոր Լեւոն Սարգսեանը 40 օրով կալանաւորելու ՌԴ դատախազութեան միջնորդութիւնը՝ այս ընթացքին Սարգսեանին Հայաստան յանձնելու հարցը քննարկելու շրջագիծէն ներս: Այս մասին Ֆէյսպուքեան էջին գրած է Հայաստանի գլխաւոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամեանը:

Աբրահամեանը յայտնած է նաեւ, որ Հայաստանի գլխաւոր դատախազութիւնն անհրաժեշտ փաստաթուղթերու փաթեթով ուղարկած է հետախուզման մէջ գտնուող, Ռուսաստանի մէջ յայտնաբերուած եւ ձերբակալուած Լեւոն Սարգսեանի յանձնման միջնորդութիւնը:

Սարգսեանը կը հետախուզուէր անցեալ տարուան հոկտեմբերէն: Ան կը մեղադրուէր 11 տարի առաջ կազմակերպուած խուճիկ կազմին մէջ առանձնապէս խոշոր չափերով գոյք յափշտակելու նպատակով աւազակային յարձակում կատարելու եւ յանցաւոր համագործակցութեան մասնակցելու մէջ: Խօսքը 2008-ին Մաքսային պետական կոմիտէի նախկին պետ Արմէն



Նախկին պատգամաւոր Լեւոն Սարգսեան

Ալեւտիսեանի առանձնատան վրայ աւազակային յարձակման մասին է: Յեղափոխութենէն ետք Ազգային անվտանգութեան ծառայութիւնը հաղորդեց, որ յարձակման իրական պատուիրատուն Լեւոն Սարգսեանն է:

Մարտ 1-ի գործով տուժողի փաստաբան Սեդա Սաֆարեանը բազմիցս յայտարարած է, որ Լեւոն Սարգսեանն աշխոժ դերակատարուած ունեցած է 2008 թուականի արիւնայի իրադարձութիւններուն եւ պէտք է առնուազն հարցաքննուի այդ գործով:

Աժ Պատգամաւորները՝ Վանցեանի Աղմկոտ Յայտարարութեան Մասին

Աժ խմբակցութիւններու անդամները խորհրդարանէն ներս հրաւիրած ասուլիսին անդրադարձած են ԱԱԾ նախկին տնօրէն Արթուր Վանցեանի այն յայտարարութեան, թէ կուսակցութիւնները դուրսէն ֆինանսաւորում կը ստանան:

«Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար Լիլիթ Մակունցն ըսած է, որ Արթուր Վանցեանը ԱԱԾ տնօրէնն էր եւ եթէ ունենար որեւէ տեղեկութիւն ազգային անվտանգութեան սպառնացող, կը ձեռնարկէր բոլոր անհրաժեշտ գործողութիւնները՝ ցանկացած վտանգ չէզոքացնելու համար: «Եւ եթէ դա չի արուել իր կողմից, ես համոզուած եմ, որ ուրեմն նման վտանգ չի եղել», - աւելցուցած է Մակունցը:

Ան նշած է, որ «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցութիւնը որեւէ երկրէ գումար չի ստանար: ՔՊ գումարները կը ձեւաւորուին անդամավճարներու եւ հանրային դրամահաւաքներու միջոցներով, ըսած է Մակունցը:

ԲՀԿ խմբակցութիւնը ներկայացնող Աժ փոխնախագահ Վահէ Էնֆիաճեանն ըսած է, որ ԲՀԿ-ն ինքնաբաւ քաղաքական ուժ է: «Երբեւիցէ մեր գործունէութեան ընթացքում մենք նմանատիպ խնդիրներ չենք ունեցել եւ նմանատիպ հարցադրումները չեն կարող մեզ հետ առերեսուել կամ առնչուել: Մեր ֆինանսական հոսքերը միշտ եղել են թափանցիկ եւ բոլոր գործողութիւններն էլ եղել են օրէնքի տառը պաշտպանելով», - ըսած է ան:

«Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար Էտմոն Մարուքեանն ալ ըսած է, որ իրենք ոչ ներսին, ոչ դուրսէն ֆինանսաւորում չունենք, անգամ ներսից չունենք: Հայաստանի պատմութեան մէջ Լուսաւոր Հայաստանը միակ խորհրդարանական ուժն է, որ մետիւ առնուի», - ըսած է ան:



ԱԱԾ նախկին տնօրէն Արթուր Վանցեան

Հարցին, թէ իսկ ինչպէ՞ս կը գոյատեւէ կուսակցութիւնը, եթէ ֆինանսաւորում չունի, Մարուքեանը պատասխանած է՝ «մի կերպ»:

«Ըստ էութեան պարոն Վանցեանի կողմից յանցագործութիւնների մասին հաղորդումներ են ներկայացուել, ընդ որում՝ տարատեսակ, քրէական օրէնագրքի մի շարք յօդուածներով: Եւ այդ հաղորդումները պատշաճ կերպով պէտք է քննարկման առարկայ դառնան:

«Երբ ասուում է՝ այսինչ բանը սպառնալիք է, եւ դու պէտք է դրա ուղղութեամբ քայլեր ձեռնարկէիր, բայց չես ձեռնարկել, դա հաղորդում է յանցագործութեան մասին: Երբ ասուում է՝ ես գիտեմ, որ կուսակցութիւն կայ, որը դրսից ֆինանսաւորում է, եւ որեւէ գործողութիւն չի արուել, էլի յանցագործութեան մասին հաղորդում է», - աւելցուցած է Էտմոն Մարուքեանը:

Ըստ անոր՝ Վանցեանի յայտարարութիւնները քաղաքական են, բայց նման յայտարարութիւններու իրաւունք ունին քաղաքական գործիչները, ոչ թէ այն անձինք, որոնք գաղտնի տեղեկութիւններու կը տիրապետեն:

Տնտեսական Աշխոյժութեան Ցուցանիշը 10 Ամսուան Մէջ Աճած Է 7,1 Տոկոսով

ՀՀ տնտեսական աշխուժութեան ցուցանիշը 2019 Յունուար-Հոկտեմբերին, նախորդ տարուան նոյն ժամանակին համեմատ, աճած է 7,1 տոկոսով: Այս մասին Facebook-ի իր էջին հրատարակած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ վկայակոչելով պաշտօնական տուեալները:

Նոյն ժամանակահատուածին՝ արդիւնաբերական արտադրանքի աճը կազմած է 8,8%, շինարարութեան աճը՝ 4,5%, առեւտուրի աճը՝ 8,9%, ծառայութիւններու աճը՝ 15,1%:

Արտահանումը աւելցած է 7,2%-ով: Միջին ամսական աշխատավարձը աճած է 5,9 տոկոսով: «Աստիճաբար բաւական լաւ ցուցանիշներ են, եթէ չըսեմ՝ շատ լաւ: Այսպիսով, ունինք բոլոր հիմքերը պնդելու, որ 2019-ի տնտեսական աճը մօտ պիտի ըլլայ 7 տոկոսին: Յոյս ունինք՝ նաեւ պիտի հատէ 7 տոկոսի սահմանագիծը», - նշած է Փաշինեան:

ՀՀ Բետական Պիւտճէի Եկամուտները 2018-ի Համեմատ Աւելցած Են 20%-ով

2019-ի Յունուար-Հոկտեմբերին ՀՀ պետական պիւտճէի եկամուտները 2018-ի համեմատ աւելցած են 20%-ով, իսկ 2017-ի համեմատ՝ 32%-ով:

Պ ե տ ա կ ա ն պիւտճէ հաշուեզրուած հարկային եկամուտներու եւ պետական տուրքի ընդհանուր ծաւալը կազմած է 1 թրիլիոն 196,7 միլիարդ դրամ: Այս մասին կը տեղեկացնէ ՀՀ կառավարութեան Ֆէյսպուքի էջը:



ԼՈՒՐԵՐ

Հոռոմի Մէջ Կայացած Են Հայաստանի Եւ Իտալիոյ Վարչապետներու Բարձր Մակարդակի Բանակցութիւնները



Հայաստանի եւ Իտալիոյ վարչապետները Հոռոմի մէջ կայացած հանդիպումի ընթացքին

Պաշտօնական այցով Իտալիոյ Հանրապետութիւն գտնուող վարչապետ Նիկոլո Փաշինեանը Հոռոմի մէջ բարձր մակարդակի բանակցութիւններ ունեցած է Իտալիոյ նախարարներու խորհուրդի նախագահ ձիւզեփփէ Քոնթէի հետ:

Հայաստանի եւ Իտալիոյ վարչապետներու հանդիպումը կայացած է Հոռոմի Քիւրի պալատին մէջ՝ Իտալիոյ վարչապետի պաշտօնական նստավայրին մէջ: Տեղի ունեցած է դիմաւորման պաշտօնական արարողութիւն. Իտալիոյ վարչապետը դիմաւորած է Հայաստանի վարչապետը, Պատուոյ պահակախումբի ղեկավարի ողջունէն ետք հնչած են Հայաստանի եւ Իտալիոյ Հանրապետութիւններու օրհներգերը, սեղի ունեցած է ստուգացք, երկու երկիրներու վարչապետները փոխադարձաբար ներկայացուցած են պաշտօնական պատուիրակութիւններու անդամներուն:

Յաջորդել կայացած է Հայաստանի եւ Իտալիոյ վարչապետներու առանձնազրոյցը, որու ընթացքին Նիկոլո Փաշինեանը եւ ձիւզեփփէ Քոնթէն քննարկած են հայ-իտալական յարաբերութիւններու ընթացքը եւ զարգացման հեռանկարները:

Առանձնազրոյցին յաջորդած լայն կազմով բանակցութիւններուն Հայաստանի եւ Իտալիոյ վարչապետներն անդրադարձած են երկկողմ համագործակցութեան հար-

ցերու լայն շրջանակի: Իտալիոյ վարչապետն իր երկրի աջակցութիւնը յայտնած է Հայաստանի ժողովրդավարական օրակարգին՝ ընդգծելով, որ օրէնքի գերակայութեան, արդարադատութեան բարեփոխումներու, ժողովրդավարական հիմնարկներու կայացման հարցով Իտալիան պատրաստ է հնարաւորինս սերտ համագործակցելու Հայաստանի հետ եւ ցուցաբերելու անհրաժեշտ օժանդակութիւն:

Նիկոլ Փաշինեանը եւ ձիւզեփփէ Քոնթէն գոհունակութիւն յայտնած են նաեւ հայ-իտալական մշակութային եւ կրթական համագործակցութեան կայակցութեամբ, արձանագրած երկու երկիրներու համալսարաններու միջեւ փոխանակման ծրագրերու արդիւնաւէտութիւնը: Մշակութային կապերու սերտացման ծիրէն ներս վարչապետ Փաշինեանը կարեւորած է հնագիտութեան ոլորտի մէջ Իտալիոյ հետ հարուստ փորձի փոխանակումը:

Հայաստանի եւ Իտալիոյ կառավարութիւններու ղեկավարները ծաւալուն քննարկում ունեցած են միջազգային անվտանգութեան արդի հարցերու, Սուրիոյ մէջ ստեղծուած իրավիճակի շուրջ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը Իտալիոյ նախարարներու խորհուրդի նախագահ ձիւզեփփէ Քոնթէին հրաւիրած է պաշտօնական այց կատարելու Հայաստան:

Էտմոն Մարուքեան Կ'առաջարկէ Լիբանանահայերուն Հրատապ Օգնութիւն Տրամադրել

Աժ «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար Էտմոն Մարուքեան դիմած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանին՝ լիբանանահայերուն հրատապ օգնութիւն տրամադրելու վերաբերեալ առաջարկով: Այս մասին կը յայտնեն կուսակցութեան մամուլի ծառայութիւնէն:

«Ինչպէս շատերուդ յայտնի է, արդէն տեւական ժամանակ է, որ Լիբանանի Հանրապետութեան մէջ կը շարունակուին զանգուածային ցուցերն ու անհանգստութիւնները: Լիբանանի այս դրութիւնը կը սպառնայ նաեւ տեղի հայ համայնքին, որ մեծ թիւ կը կազմէ Լիբանանի մէջ, անվտանգութեան:

Այս պայմաններուն մէջ ՀՀ կառավարութիւնը պէտք է սատար կանգնի մեր հարիւր հազարաւոր հայրենակիցներուն՝ անոնց այս իրավիճակին մէջ միտակ չձգելու համար:

Այսպիսով, մեր կողմէ Լիբանանի հայ համայնքի ներկայացուցիչներուն Հայաստանի մէջ ընդունելու եւ անհրաժեշտ օգնութիւն տրամադրելու հրատապ ծրագիր իրականացնելու առաջարկ ներկայացուած է», - նշած է Մարուքեան:

ԱՄՆ Գոնկրէսականները Կոչ Կ'ընեն Հաւասարաչափ Ռազմական Օգնութիւն Տրամադրել Հայաստանին Ու Ատրպէյճանին

ԱՄՆ Գոնկրէսի անդամներ ձեքի Սփիրը, Ֆրենք Փալոնը եւ Ատամ Շիֆը Նոյեմբեր 18-ին նամակ յղած են ԱՄՆ պետական քարտուղար Մայք Փոմփէյոյին, ուր կրկին մտահոգութիւն յայտնած են Հայաստանին ու Ատրպէյճանին տրամադրուող ռազմական օգնութեան անհամաչափութեան կայակցութեամբ, կը յայտնէ «Ամերիկայի ձայնը»:

Շնորհակալութիւն յայտնելով պետական քարտուղարին իրենց առաջին նամակին պատասխանելու եւ այս հարցի շուրջ անձնակազմի անդամներու մակարդակով աշխատանքային հանդիպման համար՝ գոնկրէսականները ընդգծած են, որ կը շարունակեն մտահոգուած մնալ այս երկու երկիրներու միջեւ ռազմական օգնութեան չափերու հարցով: Նամակին մէջ գոնկրէսական Շիֆը, Սփիրն ու Փալոնը անհամաձայնութիւն յայտնած են ԱՄՆ պետական քարտուղարի այն պնդման վերաբերեալ, ըստ որում, 102 միլիոն տոլարի ռազմական օգնութիւնը Ատրպէյճանին չի խաթարէր դարբաղեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման գործընթացն ու չօգտագործուիր որեւէ կերպ Հայաստանի դէմ ռազմական յարձակման ժամանակ:

Նամակին մէջ գոնկրէսականները փաստած են, որ Ատրպէյճանի ռազմական ներուժը վերջին տարիներուն անընդմէջ կ'աճէ: Անոնք ընդգծած են, որ ամերիկեան ռազմական օգնութիւնը հնա-

րաւորութիւն կու տայ Ատրպէյճանին աւելի մեծցնել ռազմական ներուժը եւ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դէմ յարձակում իրականացնելու հնարաւորութիւնը:

«Կասկած չկայ, որ Ատրպէյճանին անվտանգութեան ոլորտի մէջ յատկացուող օգնութեան մեծացումը անհավասարակշռութիւն կը ստեղծէ տարածաշրջանին մէջ եւ կ'անտեսէ ԱՄՆ արտաքին քաղաքականութեան մէջ քսանամեայ նախադէպը», - նշած են գոնկրէսականները նամակին մէջ՝ շեշտելով, որ ռազմական օգնութեան համաչափ տրամադրումը միակ ճանապարհն է, որու միջոցաւ ԱՄՆ-ը կրնայ պահպանել մ տարածաշրջանային գերտէրութեան հեղինակութիւնը, որ կրնայ հաշտեցնել Ատրպէյճանը եւ Հայաստանը:

Գոնկրէսականները կոչ կ'ընեն ԱՄՆ պետական քարտուղարութեանն ու պաշտպանութեան նախարարութեան Հայաստանի համար կազմակերպելու համապատասխան դասընթացներ եւ տրամադրելու սարքաւորումներ՝ գործընկերային ներուժը մեծցնելու համար: Այդ կ'օգնէ անվտանգ դարձնել սահմաններն ու ռազմական հաւասարութիւն ստեղծել, նշուած է նամակին մէջ: Գոնկրէսականները նաեւ խնդրած են այս հարցի շուրջ հանդիպում կազմակերպել ԱՄՆ Գոնկրէսի անդամներու ու համապատասխան նախարարութիւններու պատասխանատու պաշտօնեաներու միջեւ:

Պոլսոյ Քաղաքապետը Հայոց Ցեղասպանութիւնը Ծանցող Գործիչը Նշանակած Է Պաշտօնի

Թուրքիոյ գլխաւոր ընդդիմադիր ուժ համարուող «Ժողովրդահանրապետական» (CHP-ժՀԿ) կուսակցութեան անդամ, Պոլսոյ քաղաքապետ էքրեմ Իմամօղլուի նոր նշանակումը աղմուկ բարձրացուցած է իշխանամէտ մամուլին մէջ: Այս մասին կը յայտնէ Ermenihaber.am-ը:

Իմամօղլուն քաղաքապետարանին մէջ խորհրդական նշանակած է տարբեր հարցերու շուրջ իշխանութեան հանդէպ սուր քննադատութիւններով յայտնի, Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող Զեյնեպ Թանպայը: Իշխանամէտ կամ աջ ուղղուածութիւն ունեցող շարք մը լրատուամիջոցներ «գայթակղային» որակած են այս նշանակումը ու ներկայացուցած անցեալին տարբեր հարցերու շուրջ իշխանութիւններուն ուղղուած թանպայի սուր քննադատութիւններէն մի քանին:

Մասնաւորապէս էրտողանի խօսափող համարուող «Sabah» թերթի կայքը լիչեցուցած է, որ Թանպայը 2016-ին միացած է Պոլսոյ մէջ Հայոց ցեղասպանութեան գոհերու լիչատակին նուիրուած միջոցաւարներուն ու մէջբերած այդ առիթով ընկերային ցանցերուն մէջ անոր ըրած գրառումը:

«Պետութիւնը պէտք է ներդրութիւն խնդրէ, փոխհատուցում տրամադրէ, ետ վերադարձնէ հայերուն պատկանող պետականացուած գոյքերը ու քաղաքացիու-

թիւն տրամադրէ անոնց»:

Այբելը լիչեցուցած է նաեւ, որ առիթով մը Թանպայն ըսած էր, որ ոչ ոք իրեն կրնայ ստիպել կրկնել Թուրքիոյ Հանրապետութեան հիմնադիր Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի աւանդած կարգախօսը՝ «Երջանիկ է ան, որ կ'ըսէ՝ ես թուրք եմ»:

Թանպայը բազմիցս սուր քննադատութիւններ հնչեցուցած է նաեւ քրուտերու նկատմամբ Թուրքիոյ իշխանութիւններու վարած քաղաքականութեան հասցէին:

Նշենք, որ մասնագիտութեամբ պարուհի Զեյնեպ Թանպայը յայտնի թուրք քաղաքական գործիչ, նախկին պատգամաւոր Ուֆուք Ուրասի կիսն է: Ուրասը մասնակցած է Թուրքիոյ մէջ շարք մը թուրք մտաւորականներու կողմէ կազմակերպուած «Ներեցէ՛ք մեզ» արշաւին, որու ժամանակ անոնք հայերէն ներողութիւն կը խնդրէին այն բանի համար, որ «Մեծ աղէտը, որուն 1915 թուականին ենթարկուած են Օսմանեան կայսրութեան մէջ ապրող հայերը, կը բախի անտարբերութեան եւ ժխտողականութեան»:

Հայաստան ու Արցախ այցելած Ուրասը ներառուած է Ատրպէյճանի ԱԳՆ-ի «սեւ ցուցակին» մէջ, քանի որ «առանց Ատրպէյճանի իշխանութիւններէն թոյլտուութիւն ստանալու մեկնած է Ղարաբաղ»:

Հայ Եւ Ատրպէյճանցի Լրագրողները Փոխադարձ Այցեր Կատարած Եմ



Նոյեմբեր 17-21-ը տեղի ունեցած է Հայ եւ ատրպէյճանցի լրագրողներու խումբերու փոխանակում. Հայաստանի եւ Արցախի զանգուածային լրատուամիջոցներու ներկայացուցիչներն այցելած են Ատրպէյճան, իսկ ատրպէյճանական 21 Ներկայացուցիչները՝ Հայաստան եւ Արցախ: Այս մասին կը փոխանցէ Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը:

Պաշտօնական հաղորդագրութեան մէջ նշուած է՝ ծրագիրը նախապատրաստուած եւ կեանքի կոչուած է ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչի համակարգմամբ եւ Հայաստանի, Արցախի ու Ատրպէյճանի համապատասխան գերատեսչութիւններու ներգրամամբ: Արտաքին գործոց նախարարութիւնն այլ մանրամասներ չի փոխանցեր:

Հաղորդակցութեան ուղիները պէտք է բաց ըլլան, կարծիք յայտնած է քաղաքագէտ Ստիոբա Սաֆարեանը՝ անդրադառնալով հայ եւ ատրպէյճանցի լրագրողներու փոխադարձ այցերուն: Քաղաքագէտը նման այցերը կարեւոր եւ ճիշդ քայլ կը համարէ:

«Եթէ կողմերը շարունակուած են հաղորդակցուել, ես չեմ ասում՝ բանակցել, եթէ շարունակուած են հաղորդակցուել՝ երկրի ղեկավարների մակարդակով, լրատուամիջոցների, հասարակական կազմակերպութիւնների մակարդակով, սա նշանակուած է՝ մտածում են առանց պատերազմի խնդրի լուծման մասին: Սա կարեւոր, փոքրիկ, բայց շատ կարեւոր գործիք է դառնում խաղաղութեան պահպանման առումով», - «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ընդգծած է Սաֆարեանը:

Ատրպէյճան այցելած էին «Մետիամաքս» լրատուական գործակալութեան խմբագիր Դաւիթ Ալաւերտեանը, «Շանթ» հեռուստաընկերութեան մեկնաբան Արտիոմ Երկանեանը եւ Արցախի հանրային հեռուստաընկերութեան մեկնաբան Էտիկար Էլբակեանը: Անոնք իրենց այցի մանրամասները պիտի ներկայացնեն առաջիկայ օրերուն:

Իսկ թէ ինչ կու տան այս այցերը երկու երկիրներուն, քաղաքագէտ Ստիոբա Սաֆարեանն ընդգծած է. - «Առնուազն գոնէ մենք՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի հասարակութիւնները կը լսեն այն ձայները, որոնք շատ յաճախ չեն լսում, որովհետեւ մեր միջեւ ահռելի պատ է դրուած, եւ Ատրպէյճանի իշխանութիւնների առաւել եւս վարած քաղաքականութեան առումով՝ հակահայկական հիսթերի-

իայի, յայտայտացութեան քաղաքականութեան, մեզ համար կարեւոր է հասկանալ, թէ, ի վերջոյ, ինչ են մտածում եւ ինչու են այդպէս մտածում: Կապ չունի՝ դա մեզ դուր կը գայ, թէ դուր չի գայ, վստահաբար՝ դա մեզ դուր չի գայ, եւ վստահաբար՝ նրանց հասարակութեանը դուր չի գայ այն, ինչ կը լսեն այստեղ: Բայց ամենակարեւորը, նորից եմ կրկնում, երկու կողմերում սխալ հաշուարկներից խուսափելու եւ այս փխրուն խաղաղութիւնը պահպանելու ու առաջ տանելու հարցը կայ: Հետեւաբար, այս առումով, այս այցերը առնուազն գոնէ այդ տեսակէտները կը տեղափոխեն երկու մայրաքաղաքներ եւ երկու երկրների հասարակութիւններին»:

Հայաստանցի եւ ատրպէյճանցի լրագրողներու մասնակցութեամբ նախապէս համատեղ ծրագիրներ իրականացուցած Երեւանի Մամուլի ակումբի ղեկավար Պորիա Նաւասարդեանն «Ազատութեան» հետ զրոյցի ժամանակ ըսած է՝ նման փոխայցերու կարեւորութեան մասին կարելի կ'ըլլայ խօսիլ միայն լրագրողներու հրապարակումներէն ետք:

«Եթէ այդ հրապարակումները կ'օգնեն ե՞ւ ատրպէյճանական, ե՞ւ հայկական հասարակութիւններին աւելի լաւ հասկանալ՝ ինչ տրամադրութիւններ, պատկերացումներ հակամարտութեան մասին կան այդ երկրում, դա արդէն որոշակի ազդեցութիւն գուցէ ունենայ յետագայ գործընթացի վրայ: Եթէ այդ փոխայցելութիւնը սահմանափակուող գուտ նրանով, որ մեր երեք գործընկերները Ատրպէյճանից ու Հայաստանից ինչ-որ եկել են, ինչ-որ բան են տեսել, ինչ-որ մարդկանց հետ են հանդիպել, եւ այդ ամէն ինչը մնալու է իրենց մէջ, ապա ես, ճիշդն ասած, այդ կարգի փոխայցելութիւնների իմաստը չէի տեսնի», - ընդգծած է Նաւասարդեանը:

Դեռ նախորդ շաբաթ ատրպէյճանական «Թուրան» գործակալութիւնը հաղորդած էր, որ լրագրողներու այցերու շուրջ պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է երկու երկիրներու ղեկավարներու մակարդակով՝ «փոխադարձ վստահութիւն ստեղծելու հարցով մարդասիրական քայլերու շրջագիծէն ներս»: Մարդասիրական միջոցառումներ իրականացնելու մասին պայմանաւորուած էին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը գարնան վիեննայի մէջ կայացած հանդիպման ընթացքին:

Փաշինեանին Հարց Ուղղած «Պլոկորը» Կապուած Է Ատրպէյճանի Յատուկ Ծառայութիւններու Հետ

Միլանի Հայ Առաքելական Սուրբ Քառասուն Մանկունք եկեղեցւոյ մէջ հայ համայնքի ներկայացուցիչներու հետ վարչապետ Նիկոլ Փաշինեանի հանդիպման ընթացքին մուտք գործած եւ ատրպէյճանցի վիտէոպլոկոր ներկայացած Աթա Ապտուլաեւը կապուած է Ատրպէյճանի յատուկ ծառայութիւններու հետ, Ոստիկանութեան կից հանրային խորհուրդի անդամ է եւ ժամանակին անցած է քրէական գործով:

Այս տեղեկութիւնները դեռ 2011 թուականին հրապարակուած է «Ազատութիւն» ռատիոկայանի ատրպէյճանական ծառայութիւնը: Այն ժամանակ Ապտուլաեւը լրագրողներու տեսադաշտին մէջ յայտնուած էր ընդդիմութեան ցոյցերը ցրելու ժամանակ իրաւապահներուն օգնելու իր գործողութիւններով:

Ապտուլաեւը կը վարէ Ֆէյսպուքեան ATA TV էջը, ուր եւ հրապարակած է գայթակղային իրադարձութեան տեսագրութիւնները: Համացանցին մէջ տարածուած են նաեւ անոր լուսանկարները Ատրպէյճանի նախագահ Ալիեւի, Ալիեւի դստեր, Ատրպէյճանի արտաքին գործոց նախարարի հետ: Նաեւ Չերմ լուսանկարներ ունի Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինի մամուլային ծառայութիւնի Փեսքովի, Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սերգեյ Լաւրովի եւ շարք մը այլ բարձրաստիճան պաշտօնեաներու հետ:

Հանդիպման ընթացքին Աթա Ապտուլաեւը արտահերթ հարցի հնարաւորութիւն պահանջած է, եւ վարչապետ Փաշինեանի թոյլտուութեամբ, հնչեցուցած է այս հարցը. - «Ամբողջ աշխարհը ճանչցած է ատրպէյճանցիներու ցեղասպանութիւնը Հայաստանի կողմէ, ե՞րբ սա



պիտի աւարտի: Պէտք է աւարտել այս պատերազմը: Ազատէք մեր հողերը, կը խնդրեմ»:

Վարչապետ Նիկոլ Փաշինեանը ի պատասխան պլոկորի անհանգստութեան, երաշխաւորած է անոր անվտանգութիւնը, ինչէն ետք արձանագրած է. - «Անհնար է պատկերացնել, որ հայը հնարաւորութիւն ունենար մուտք գործել ատրպէյճանական կողմի նմանատիպ որեւէ միջոցառման եւ հարց տալ Ատրպէյճանի նախագահին»:

Շուրջ 10 վայրկեան տեւած հարցուպատասխանի ընթացքին Փաշինեանը սովորական սուտ որակեց Ապտուլաեւի պնդումը, թէ ամբողջ աշխարհն ընդունած է Ատրպէյճանի նկատմամբ ցեղասպանութիւնը, քանի որ նոյնիսկ Ատրպէյճանի նախկին նախագահ Այազ Մուխլիպովը ռուսաստանեան «Նեգալիսիմաեա կազմի»-ին հարցազրոյց տուած է եւ ըսած, որ Խոճալու իրադարձութիւնները կազմակերպած է ատրպէյճանական ընդդիմութիւնը, որպէսզի իշխանափոխութիւն իրականացնէ Ատրպէյճանի մէջ:

ՍԴՀԿ-ի Հանդիպումը

Ծարուցակուած էր 1-էն

ցութիւնը ներկայացնող պատուիրակութիւնն մը հանդիպում մը ունեցաւ նախարար Ն. Աղաբալեանի հետ: Հանդիպման ներկայ էր նաեւ Ուաշինկթընի մօտ Արցախի մնացուած ներկայացուցիչ Ռուպերթ Աւետիսեան:

Ս.Դ.Հ.Կ. Վարիչ Մարմնի պատուիրակութեան մաս կը կազմէին Գ. Մոլոյեան, Վ. Քէօրոյլեան, Ռ. Մուրադեան եւ Կ. Տեփոյեան:

Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան անունով Վարիչ Մարմնի փոխ ատենապետ Գաբրիէլ Մոլոյեան բարի գալուստ մաղթելէ ետք ողջունեց Արցախի Մշակութի նախարար Տիկ. Նարինէ Աղաբալեանի ներկայութիւնը եւ Ս.Դ.Հ.Կ-ի

գորակցութիւնը յայտնեց Արցախի ազատատենչ հերոս ժողովուրդի մղած արդար պայքարին եւ յաջողութիւն մաղթեց հիմնահարցի բարւօք լուծումին:

Իր պատասխան խօսքին մէջ Ն. Աղաբալեան շնորհակալութիւն յայտնեց գորակցութեան համար եւ հակիրճ տեղեկութիւններ տուաւ իր նախարարութեան մշակութան ուժեր եւ օգտաշատ համատարած աշխատանքներուն մասին: Ան միաժամանակ լուսաբանութիւններ տուաւ երկրի դիմակալած տարբեր բնագաւառներու դժուարութիւններուն մասին, որոնցմէ կարեւորագոյններէն է ջրաբաշխման մատակարարութիւնը: Առանձնապէս շեշտեց նաեւ այլ մարզերու մէջ արձանագրուած յառաջընթացը:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍԻՏԻԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

Տիարաքիռի Կիսաւեր Զայկական Եկեղեցին Ոչնչանալու Վտանգի Տակ է



Թուրքիոյ Տիարաքիռ քաղաքի պատմական Սուր շրջանի Ալիփաշա թաղամասին մէջ գտնուող Ս. Սարգիս Հայկական կաթողիկէ եկեղեցին գանձ որոնողներու թիրախ դարձած է: Անոնք կը հանեն եկեղեցւոյ քարերը ու կը վաճառեն, գանձ գտնելու յոյսով՝ անցքեր կը բանան պատերուն կամ հիմքերուն մօտ, որոնց հետեւանքով առանց այդ ալ կիսաւեր եկեղեցին յայտնուած է ամբողջապէս ոչնչանալու վտանգի տակ:

Արձանագրութիւններու եւ պատմական հաւաստի տեղեկութիւններու սակաւութեան պատճառով եկեղեցւոյ մասին քիչ բան յայտնի է:

Զուլիցերիացի պատմաբան Մաքս Վան Պերքհեմ «Ամիտա» անունով աշխատութեան մէջ կը գրէ, որ օսման հպատակ հայերը եկեղեցին կառուցած են 1515-ին ու անուանած՝ Սուրբ Սարգիս: 19-րդ դարու բանասէր, աշխարհագրագէտ Ղուկաս Ինճիճեանի աշխատութեան մէջ կը խօսուի քարաշէն, հնգախորան հայկական եկեղեցւոյ մասին, իսկ Թուրքիոյ ասորական համայնքի ներկայացուցիչ, պատմաբան Գաբրիէլ Աքիլզը այդ եկեղեցւոյ համար կ'օգտագործէ Սօր Տումիանա անունը:

Եկեղեցւոյ մասին տեղեկութիւններ հաղորդած է Անգարայի համալսարանի արեւելեան լեզուներու բաժանմունքի շրջանաւարտ Ռուվեիա Թունչ, որ Գերմանիոյ մէջ կը ղեկավարէ «Յիշողութիւն ու Տեղանք» նախագիծին աշխատանքները: Եկեղեցւոյ վերաբերեալ ուսումնասիրութիւններ կատարած Թունչ կը նշէ, որ Ս. Սարգիսը միւս մեծ եկեղեցիներու նման իր կազմին մէջ ունեցած է դպրոց:

Թունչ կը պատմէ, որ Օսմանեան կայսրութեան մէջ 4572 ոչ-քրիստոնէական դպրոց եղած է, սակայն անոնցմէ 4074 չեն ունեցած

պաշտօնական թոյլտուութիւն, իսկ Ս. Սարգիս եկեղեցւոյ կազմին մէջ գործող դպրոցներուն թոյլտուութիւն տրուած է միայն 1893-ին:

«Օրիորդաց դպրոցին, սակայն, թոյլտուութիւն չէ տրուած, - կը շարունակէ Թունչ,- եւ հետաքրքրականը այն է, որ թէեւ 1893-ին փաստաթուղթեր ստացած է, սակայն Ս. Սարգիս եկեղեցին ու դպրոցները անմասն չեն մնացած 1894-96 թուականներու սադրանքներէն: Եկեղեցին այրած է, դպրոցները՝ ավերուած: Միեւնոյն ժամանակ լուրջ վնասներ կրած են բազմաթիւ հայկական արհեստանոցներ, խանութներ ու տուներ:

«1899-ին թուագրուող փաստաթուղթ մը մէջ կը նշուի, որ եկեղեցւոյ դպրոցներու վերանորոգման համար թոյլտուութիւն տրուած է: Ատկէ ետք ուսումնական կեանքը շարունակուած է դպրոցներու մէջ, հակառակ անոր որ բազմաթիւ տուներէն հաւաքուած էին հայերէն դասագիրքերը:

1915-էն ետք եկեղեցին ու դպրոցները բռնազրաւողները գանոնք օգտագործած են որպէս անմշակ բրինձի գործարան, անասնաբոս, հացահատիկի պահեստ եւ այլն: Վերջին տարիներուն Սուր թաղամասին մէջ տեղի ունեցած բախումներէն (նկատի ունի 2015 Դեկտեմբերէն 2016-ի Մարտին թաղամասին մէջ քիւրտ զինեալներու եւ թուրք ուժայիններու միջեւ տեղի ունեցած բախումները-նմբ.) ետք թաղամասին մէջ սկսած քաղաքաշինութեան ծրագրի հետեւանքով եկեղեցին յայտնուած է քանդուելու վտանգի տակ», կը նշէ Թունչ:

Անոր խօսքով՝ այս պահուն գանձախոյզներու յարձակումները եկեղեցւոյ վրայ կը շարունակուին, ուստի 80 տոկոսով ավերուած եկեղեցին պահպանելու համար պէտք է

1915ին Պէյազիտի Զրապարակին Վրայ 19 Հոգիի Հետ Միասին Կախաղան Զանուած Զնչակեան Գործիչ Փարամագի Կեանքին Նուիրուած Փաստակարգ Ցուցադրուեցաւ Իզմիրի Մէջ



Իզմիրի մէջ «Էկէ Զօրակցութեան Հարթակ» կազմակերպութեան նախաձեռնութեամբ ցուցադրուեցաւ ժապաւէն մը որուն մէջ կը պատմուի 15 Յունիս 1915 թուականին Իսթանպուլ՝ Պէյազիտի հրապարակին վրայ 19 հոգիի հետ միասին կախաղան հանուած, հայ ընկերվարական Հնչակեան կուսակցութեան անդամ Փարամագին կեանքը: Յիշեալ փաստակարգը պատրաստուած է Գատիր Ազընի կողմէ, որ արդէն «Հայ Յեղափոխական Փարամագ» խորագրեալ գրքին հեղինակն էր:

Փարամագի (Մամթէոս Սարգիսեան) կեանքին նուիրուած փաստակարգը ցուցադրուեցաւ Պայրաքըլ գաւառակի Թէփէզուլէ համալսարանի կեդրոնի սրահին մէջ: Ներկայացուած է ետք Գատիր Ազըն գոհունակութիւն յայտնեց այս ժապաւէնին ստեղծած մեծ հետաքրքրութեան առիթով: «Շատ ուրախացայ որ մեր պատրաստած փաստակարգը այսքան մեծ ընդունելութեան արժանացաւ, ուրախացայ որովհետեւ ասիկա առիթ պիտի ըլլայ որպէսզի դարձեալ յիշենք մոռցուած եւ անգոյ նկատուած պատմութիւն մը: Մանաւանդ կ'ուրախանամ մտածելով որ

այս փաստակարգը ցոյց կու տայ թէ որքան տկար յիշողութիւն եւ տկար փորձառութիւն ունինք ընդհանրապէս ընկերվարական շարժումին մասին: Ժապաւէնը միւս կողմէ երեւան կը հանէ այս երկրին մէջ հակաժողովրդավար գործադրութիւնները, էթնիք մաքրագործումները, հարիւր տարի առաջուան մշակութային հարստութիւնը:

Գատիր Ազըն դիտել տուաւ որ, պիտի շարունակէ հետաքրքրուիլ ընկերային եւ ընկերվարական նոր ծրագրերներու պատրաստութեամբ: «Փարամագի փաստակարգը մեծ տպաւորութիւն գործեց իմ վրայ, որովհետեւ ահաւստիկ կարգ մը մարդիկ Իսթանպուլի Պէյազիտի նման կեդրոնական հրապարակի մը վրայ 1915ին «կեցցէ ընկերվարութիւնը» ըսած են: Գատիր Ազըն աւելցուց որ 100 տարի առաջ Փարամագի հրապարակած պահանջները այսօր ալ մեր պահանջներն են:


Փարամագի կեանքին նուիրուած փաստակարգը նկարուած է ժընեւ, Պագէլի, Պէյրութի եւ Իսթանպուլի գանազան վայրերուն մէջ:

«ՄԱՐՄԱՐԱ» Պոլիս

անյապաղ միջոցներ ձեռնարկուին: «Եթէ եկեղեցին քանդուի, անոր հետ կը վերանայ ամ ողջ պատմութիւն մը ու յիշողութիւն», կ'հաստատէ Թունչ ու կը նշէ, որ թէեւ եկեղեցին քանդուելու եզրին է, բայց դէպի իրեն կը քաշէ բազմաթիւ

գրօսաշրջիկներ թուրքիայէն ու արտասահմանէն:

«Ամէն տարի այստեղ Հայաստանէն խումբեր կու գան: Եթէ վերականգնուի, կը դառնայ գրօսաշրջիկներու մշտական կանգառներէն մէկը», կ'եզրափակէ Թունչ:



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

HEALTH INSURANCE & MEDICARE (age 65 and over)

Open Enrollment 2020
Starting Oct. 15, 2019

ԱՌՈՂՋԱՊԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
եւ MEDICARE (65 Տարեկան եւ Վեր)
15 Օգոստոս 2019-էն սկսեալ

Մենք ձեզի կ'օգնենք. Խորհրդակցեցէք մեր գործակալներէն մէկուն հետ այսօր՝

We will help you! Consult with one of our Agents today!

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815

MaronianInsurance.com

«Նոր Օր» Շարաքաթերթի Նախաձեռնած Հրապարակային Քննարկումը Յետ-Թաւշեայ Յեղափոխութեան Մասին



Ընտրանի հասարակութիւն մը փութացած էր Կլենտոյլի Հանրային Գրադարանի սրահը, ներկայ գտնուելու հրապարակային քննարկումի մը, որ տեղի ունեցաւ Երեքշաբթի 19 Նոյեմբեր, 2019ին: Ներկաներուն մէջ կը նշմարուէին Հայաստանի գլխաւոր հիւպատոսի խորհրդական Էտկար Գրիգորեան, երեք կուսակցութիւններու շրջանային ղեկավար ներկայացուցիչներ եւ ընտրանի հասարակութիւն մը:

«Նոր Օր» շաբաթաթերթի նախաձեռնած սոյն միջոցառումին գլխաւոր նիւթն էր «Ներկայ Հայաստանի յետ-թաւշեայ յեղափոխութեան արտաքին եւ ներքին քաղաքականութիւնը, ժողովրդավարութիւնը, տնտեսութիւնը եւ ռազմաքաղաքական իրավիճակը»:

Նախաձեռնող օրկանի անունով ներկաներուն ողջունեց «Նոր Օր»-ի խմբագիր Հրայր Սեփեթեան: Ան ամփոփ գիծերու մէջ անդրադարձաւ թաւշեայ յեղափոխութեան առթիւ Մայր Հայրենիքի մէջ կազմաւորուած ժողովրդային զարթոնքին եւ անոր հետեւանքներուն: Ապա բեմ հրաւիրեց իրաւաբան Կարո Ղազարեանը, որպէս օրուան քննարկումը համադրող:

Կարո Ղազարեան, ներածական ընդարձակ ելոյթով մը, բացայայտումներ կատարեց Հայաստանի վերջին երկու տասնամեակներուն տիրող ընդվզեցուցիչ իրավիճակի մասին, որուն որպէս հետեւանք՝ ժողովուրդը յոգնած էր եւ Նիկոլ Փաշինեան խիզախութիւնն ունեցաւ ոտքի կանգնելու, ձայն բաժրացնելու արդարութեան եւ բարեկարգութիւններու պահանջներով:

Ծանօթ հասարակական գործիչ եւ վերլուծաբան Փանոս Թիթիգեան, իր ելոյթին մէջ անդրադառնալով հայրենի իրականութեան ըսաւ. «... ուր էինք, ուր ենք եւ ո՞ւր կ'երթանք...»: Ան նշեց որ երկրէն ներս փոփոխութիւններն անհրաժեշտ էին, քանի որ ժողովուրդը այսպէս դունդ կ'երթար: Անդրադառնալով թաւշեայ յեղափոխութեան հետք Հայաստան արտաքին քաղաքականութեան նշեց որ ոչ մէկ փոփոխութիւն կայ, եղածը ներքին է: Իսկ դրացի վրաստանի մէջ յեղափոխական պոռթկումը հակառակ դրսեւորում ունեցաւ:

Փ. Թիթիգեանի կարծիքով «առանց ռուսի պաշտպանութեան մենք կը կորսնցնենք մեր դիմագիծը: Պէտք է Եւրոպայի եւ արեւմուտքին ալ նայինք առանց ռուսը վշտացնելու: Քաղաքականութեան մէջ ճկունութիւնն անհրաժեշտ է...» յարեց ան:

«Մասիս» շաբաթաթերթի

խմբագիր Գրիգոր Խոտանեան իր ելոյթին մէջ նշեց. «... Թաւշեայ յեղափոխութեան հետք նոր իշխանութիւնները բարեփոխութիւններ սկսան թէ տնտեսական, թէ վարչական եւ թէ ներքին բնագաւառներու մէջ: Առանձին եւ ուշագրաւ երեւոյթն այն էր որ սկսաւ օլիգարխներու մենաշնորհներուն սանձարձակ գործունէութիւնները օրինական հակաշիռի ենթարկել: Միաժամանակ զարկ տալ ազատ շուկայական յարաբերութիւններուն, որ յանգեցաւ արագ լուծման: Փաշինեանի օրով զարկ տրուեցաւ նաեւ առեւտրական եւ այլ հաստատութիւններու հարկերու զանձումներուն: Գալով Արցախի հիմնահարցին՝ բանակցային ֆորմաթին մէջ պէտք է որ Արցախն ալ իր մասնակցութիւնը բերէ, իսկ արտաքին քաղաքականութեան մէջ թաւշեայ յեղափոխութեան կերտիչները՝ չափաւորեալ եւ իրատես գործելաձեւ ուղեգրեցին»:

Բանախօսը յաջորդ 15 վայրկեաններու ընթացքին խօսելէ ետք 365 էջերէ բաղկացած «Գաղթականութենէ Բժշկութիւն» հատորով Տոքթ. Թաշճեանի շօշափած հայ բժշկական համագործակցութեան կազմակերպման ու մասնակցութեան, այդ զգծով Հայաստան, եւրոպական երկիրներ, Արամի թին այցելութիւններուն, իր ուսուցիչներէն յատկապէս Վազգէն Այգունիի (Գէորգ Պաղճեան) հանդէպ տածած անհուն երախտագիտութեան, 1978-ի Լիբանանի քաղաքացիական պատերազմի բերումով նախ՝ Գանատա, ապա՝ 1980-ական թուականներուն ընտանեօք Ամերիկա հաստատուելուն, UCLA-էն բժշկութեան արտօնագրի արժանանալուն, այստեղ շուրջ երկու տասնամեակ անտունիներուն ծառայելուն, ընտանեկան կեանքին, հօրն ու մօրը՝ Յարութիւն և Մարի Թաշճեաններուն, կնոջ՝ Մատիլին, զաւակներուն՝ Ռաֆիին և Մարիթին, ինչպէս նաեւ Արարատին նուիրած սրտագրաւ բանաստեղծութիւններուն, հայ կրթական, թատերական ու մշակութային կեանքին բերած մասնակցութեան մասին, շեշտեց, թէ

ARMENIA FUND'S 22nd INTERNATIONAL THANKSGIVING DAY

TELETHON 2019

NOVEMBER 28



To my beloved Armenia
#TelethonArmenia2019



10AM TO 8PM PST FIRST 4 HOURS LIVE FROM YEREVAN, ARMENIA!

CENTRAL CALIFORNIA

KGMC-DT Ch. 43.1
Comcast Ch. 10 | Dish Network Ch. 43
AT&T U-Verse Ch. 43
DirecTV Ch. 43

SOUTHERN CALIFORNIA

KVMD Ch 31.1 | DirecTV Ch. 31
Dish Ch. 31 | AT&T U-Verse Ch. 31
Spectrum/Charter Ch. 21, 23, 32, 721
Cox Ch. 63 | Verizon FiOS Ch. 23

SAN FRANCISCO & BAY AREA

KTSF OTA Ch. 26.1 | DirecTV Ch. 26
Dish Network Ch. 26
Comcast Ch. 8
AT&T U-verse Ch. 8

10 HOUR LIVE WEBCAST AT WWW.ARMENIAFUND.ORG



[Facebook.com/ArmeniaFund](https://www.facebook.com/ArmeniaFund)



[Twitter.com/ArmeniaFund](https://twitter.com/ArmeniaFund)



[instagram.com/ArmeniaFund](https://www.instagram.com/ArmeniaFund)



[YouTube.com/ArmeniaFundUS](https://www.youtube.com/ArmeniaFundUS)



VISIT & DONATE: www.ArmeniaFund.org or Call: 1-800-888-8897

Ծննդեան 150-ամեակ Կոմիտաս Վարդապետ Գերագանց Երաժշտագետը (1869-1935)

«Մէկ հասկցուած անկեղծ ծայր հազար ճառ կ'արժէ, որովհետեւ ճառը պէտք է սարսուռի՝ անկէ սնունդ առնելու համար, ինչ որ ժամանակներու կը կարօտի, իսկ ծայրը վայրկեանի մը մէջ կը թափանցէ»:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԴՊԿՏ. ԶԱԻԷՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Տաղանդաւոր Երաժշտագետը

Հայ եկեղեցական եւ ժողովրդական դասական երգերու բոլոր ժամանակներու տաղանդաւոր յորինող եւ մեկնաբանողն է Հայ ժողովուրդի հանճարեղ երաժշտագէտը՝ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, որուն ծննդեան 150- ամեակը կը նշեք ազգովին այս տարի: Բնածին տաղանդով, էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ձեմարանէն շրջանաւարտ, Գերմանիա ուսանած եւ արուեստի գործը հայրենիքի, Կ.Պոլսոյ, եւ Եւրոպայի մէջ բարձրագոյն մակարդակի վրայ յայտնաբերած, Կոմիտաս Վարդապետ մեր ժողովուրդի պարծանքը հանդիսացաւ իր բազմակողմանի դրսեւորումներով՝ երգ, նուագ, բանասիրութիւն, եւ երաժշտութիւն:



եւ թէ՛ համերգներ տուած: Բանասիրուած է ֆրանսերէն լեզուով եւ բացատրած հայերաժշտութեան առանձնայատկութիւնները՝ թէ՛ խօսքով, եւ թէ՛ քաղցր ձայնով, ինչպէս ժամանակակիցներ վկայած են:

Փարիզի մէջ 1906 Հոկտեմբեր 1-ին համերգ մը ղեկավարած է, եւ համերգասրահը լիքը եղած է օտար հանդիսականներով: Կը մէջբերեմ: «Կոմիտաս երգերու շարք մը ղեկավարած է՝ ֆրանսիացի գեղարուեստասէրների հոգին խռովելով: Ինք անձամբ մօտենում է երգեհոնին եւ ինքը իրեն դաշնակի վրայ ընկերակցելով սկսում է մեղմամեղմ Տիրամայր մեղեդիներ երգելով»:

1914-ին Կոմիտաս Վարդապետ կրկին Փարիզ հրաւիրուած է բանասիրութեան համար Միջազգային Երաժշտական Համագումարին: Անկէ խանդավառ Կ. Պոլիս կը վերադառնար յուսալից հեռանկարներով, որ յաջորդ Համաժողովին եւս ներկայ պիտի կարենար ըլլալ, այս անգամ Պեռլինի մէջ, ուր եւս հրաւիրուած էր բանասիրութեան հասաւ սակայն տարաբախտ տարին հայերու ձերբակալութեանց եւ կոտորածին:

Գեղջկական Հարազատ Երգեր

Այդ բոլորէն աւելի, Մեծն Կոմիտասի գերագանց արգասիքը իր հետեւողական աշխատանքին արդիւնքը եղաւ երբ անձամբ շրջեցաւ Հայաստանի գիւղերը՝ լսելու համար հայ գեղջկական երգերն ու աւանդական պարերու եղանակները՝ ուղղակի աղբիւրէն: Զանոնք բիւրեղացուց, դասական նուագի վերածնեց, վերստին ձայնագրեց եւ-րոպական ձայնագրութեամբ՝ փրկելով հարիւրաւոր երգեր իսկական կորուստէ: Ինչ որ ունինք այսօր Կոմիտաս Վարդապետէն այդ հարազատ երգերուն եւ պարի եղանակներուն հանճարեղ արդիւնքն է:

Երկու Նկատողութիւններ

Այստեղ կարեւոր կէտ մը կ'ուզեմ նշել: Կոմիտասի երաժշտութիւնը ա՛յնքան ինքնատիպ եւ հանճարեղ է որ իբրեւ երաժշտութիւն գերակշիռ կը հանդիսանայ գիրերուն եւ անոնց իմաստին վրայ: Այսինքն, երբ երգիչը կ'երգէ նկատի չունենար երբեմն թէ անպայման ինչ կը նշանակեն ոտանաւորին բառերը: Երաժշտութիւնը կը գրաւէ մեր բոլորին լրիւ ուշադրութիւնը: Այդ պատճառով երբեմն սխալ թարգմանութիւն եւ վերլուծում կը տրուի Կոմիտասի երգերու

բովանդակութեան մասին:

Օրինակ մը տամ: Հոչակաւոր «ԱՆՏՈՒՆԻ» մ'իայն իր հոյակապ եղանակով յայտնի է մեզի՝ տիեզերներով, պեմոյններով, կէս եւ քառորդ ձայնանիշերով, ստեղծելով մեյլամաղցոտ թուիչք եւ երեւակայութիւն: Երգիչը ճիշդ կ'երգէ, այո՛, եւ սակայն երբ բնագիրը պիտի կարդանք եւ կամ թարգմանենք, հոն է որ փորձութեան կ'ենթարկուինք: Անտունիին սիրտը պանդուխտ հայուն սիրտն է՝ փլած ինչպէս իր ետին թողած հայրենի տունը, ուր վալլի հաւքեր, թռչուններ, կոտրած գերաններուն մէջ բոյն դրած են:

Երկրորդ տունին մէջ Սեւ Ծովու պատմութիւն մը կայ, եւ երգիչը սխալ կ'արտասանէ երբ կ'երգէ «սեւ ծովն եմ տեսեմ» մինչդեռ բնագիրը «սեւ ծով մ'եմ տեսեմ», կը գրէ: Քարտէջի վրայի Սեւ Ծովու մասին չէ խօսքը, այլ ուրիշ սեւ ծովու, որ պանդուխտին արցունքներով լի աչքն է, երկթաւոր, այսինքն երկու գոյներով, սեւ բիբը եւ շուրջի ճերմակը, որոնք ամբհի ալիքներու (արցունքներու) հարուածներուն տակ իրար չեն խառնուիր, սեւը կը մնայ սեւ, եւ սպիտակը՝ սպիտակ:

«Երթամ ձի թանեմ», կ'ըսէ, եւ այստեղ անգլերէնի թարգմանողը առօք փառօք ձի մը ճարեմ կը հասկնայ, որուն վրայ անտունին հեծած քառասմբակ գետը պիտի նետուի եղեր: Ուրիշ ուր այս ձիու պատմութիւնը: «Ձի թանեմ, ինծի ես երթամ ջուրը նետուիմ» կը նշանակէ, ուր ձին եւ galloping դերանունն ալ աւելցուած են թարգմանութեան մէջ եւ հրատարակուած, լայն շունչով մը: Կը տեսնէք թէ ինչ ըսել կ'ուզեմ. Անտունիին երաժշտութիւնը հոյակապ, իսկ բա-

ռերը ենթակայ՝ չհասկցուելու աստիճան, կամ անոնց կարեւորութիւնը չտրուելու աստիճան:

Օրինակ մըն ալ «Կոմիտասեան Պատարագ» է: Կոմիտաս աչակերտեցաւ Մակար Եկմալեանին՝ Թիֆլիսի մէջ: Եկմալեանի Պատարագը որակաւոր ա՛յն պատարագն է որ միշտ կ'երգենք: Իսկ հանդիսաւոր օրերուն՝ հոչակաւոր Կոմիտասեան Պատարագը: Նկատելի է որ Եկմալեանի դաշնաւորած «Սուրբ Սուրբը» որ ամէն Կիրակի կ'երգենք ու կը լսենք, երկնաթուիչ նօթաներունի, եւ այնքան կը բարձրացնէ այդ սրբազան երգը դէպի վեր որքան արժանի է: Մինչդեռ Կոմիտասեան Պատարագին մէջ «Սուրբ Սուրբը», այնքան կարեւոր եւ ներշնչող, միապաղաղ է, «լօ թի», երբեք բարձր նօթեր չունեցող երգ մը:

Մտածեցի թէ ինչո՞ւ այս «թերութիւնը» Կոմիտասի մօտ, երբ իր ուսուցչին Եկմալեանի Պատարագը ինք այնքան լաւ սերտած էր: Բայց երբ շարունակեցի երգել կամ լսել Կոմիտասեան Պատարագը, ու կարգը եկաւ «Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ», եւ մանաւանդ «Հոգի Աստուծոյ» երգերուն, «Քրիստոս պատարագեալ բաշխի ի միջի մերում» եւ ապա «Գոհանամք զքէն Տէր» եզրափակիչ երգերուն, հոն թուիչքը դէպի երկինք ա՛յնքան շեշտուած է եւ կատարեալ, բազմաձայն մասերու հոյակապ համադրութեամբ: Ուրեմն Կոմիտաս Վարդապետ նախընտրած է այդ երկնառաք թուիչքը տալ իր նախընտրած երգերուն:

ԱՆՈՒԱՆԻ Վկայութիւններ

Լսեցէք հետեւեալ բացառիկ վկայութիւնները Կոմիտաս Վարդապետի ստեղծագործութեան մասին,


Շար.ը էջ 17

Միջազգային Հորիզոնի Վրայ

Միջազգային հորիզոնի վրայ Կոմիտաս Վարդապետ դասախօսեց, երգեց, նուագեց եւ սորվեցուց հայ երաժշտութիւնը՝ զայն փոխադրելով Արեւելքէն Արեւմուտք: Իր իսկ խօսքերով՝ «Անցեալները մեծ յաջողութեամբ երկու դասախօսութիւններ կարդացի Պեռլինի Երաժշտանոցում՝ հայոց երաժշտութեան մասին առհասարակ, եւ Արեւելեան երաժշտութեան մասին մասնաւոր տեղեկութիւններ տալով: Երկուքն ալ մեծ զարկ տուին երաժշտական աշխարհում յայտնի լինելուս»:

Օտար մասնագէտներ լսելով իր բանասիրութիւնները Կոմիտաս Վարդապետը անդամ ընտրեցին Միջազգային Երաժշտական Ընկերութեան: Կոմիտասի նիւթը կեղրոնացած է միշտ ա՛յն կէտին վրայ թէ ինչպէ՛ս հայ երաժշտութիւնը ինքնուրոյն եղած է իր ծագումին մէջ: Յիշեալ Միջազգային Ընկերութեան նախագահը՝ Oscar Fleischer, 1899 թուականին Կոմիտաս վարդապետին կը գրէր հետեւեալը: «Ձեր հմտալից եւ խորիմաստ դասախօսութեանց միջոցով խորունկ հայեացք մը թողուցիք դէպի ա՛յն երաժշտութիւնը որ մեզի համար ցարդ գրեթէ գոց գիրք մըն էր, եւ որ մեզի արեւմտեաններուն շատ բան ուսուցանել կարող է»:

Կոմիտաս վարդապետ Փարիզ եղած միջոցին թէ՛ բանասիրուած է,



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի լոյսալ Արարատ:


Ծառ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:

Նախքան Ձեր ծրագրերուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կառաչարկով

1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
2- Ունիք Աստի թաղման ու յուղարկատրութեան ծառայութիւններ յարմար գիներով

Մանրամասնութեան համար դիմել՝
ISABEL CRISTINA KEMANIAN
Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
Email: isabel.kemania@sci-us.com



Կոմիտաս Վարդապետի Ծննդեան 150 Ամեակին Նուիրուած Փառաւոր Համերգ՝ Թորոնթոյի Սէջ



Լուսակախուժ: Թային Չայճեան

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԴԵՐՁԱԿԵԱՆ

Երաժշտութեան մեծ հանճար Կոմիտասի ծննդեան 150 ամեակին առիթով Թորոնթոյի մէջ սարքուեցաւ բարձրամակարդակ համերգ մը, որ անտարակոյս Հայաստանէ դուրս արտասահմանի մէջ կազմակերպուած յոբելեանական ամէնէն փայլուն ձեռնարկներէն մին էր: Համերգը ամբողջութեամբ նուիրուած էր Կոմիտասի ստեղծագործութիւններուն:

Այս համերգին ամենայատկանշական կողմն աչն էր, որ կատարուեցաւ ութսուն է աւելի ոչ - հայ արուեստագետներու կողմէ, որոնք բարձրամակարդակ համերգ մը սարքեցին եւ ոչ թէ միայն ծանօթացուցին, այլ իր երաժշտութեան ընդ մէջէն կենդանացուցին անմահ Կոմիտասը: Այսպէս՝ հայերու կողքին օտարներ եւս վայելեցին երեկոն եւ ծանօթացան Կոմիտասի անձին եւ իր բացառիկ ստեղծագործութիւններուն:

Համերգը սարքուեցաւ Թորոնթոյի «Թէլլա» կատարողական եւ ուսուցման կեդրոնի, ամենալաւագոյն համերգասրահներէն մին հանդիսացող Koerner Hall ի մէջ, Կազմակերպութեամբ «Royal Conservatory of Music» եւ «Amici» սենեկային նուագախումբերու, գործակցութեամբ եւ հովանաւորութեամբ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, Կատարողական Արուեստներու Գանատահայ Ընկերակցութեան ու Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան:

Սրահին մէջ առաջին կարգերու վրայ տեղ գրաւած էին Գանատայի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր Դեսպան՝ Անահիտ Յարութիւնեան, հիւպատոս Արար Մկրտիչեան, Հ.Հ. Թորոնթոյի պատուակալ հիւպատոս Վարուժան Լափոյեան, Գանատայի հայոց թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Չալեան, հոգեւոր հայրեր, հանրածանօթ շարժանկարի բեմադրիչ Ատոմ Էկոյեան եւ դերասանուհի Արսինէ Խանձեան, քաղաքի մէջ գործող քաղաքական կուսակցութիւններու, եկեղեցիներու, միութիւններու, կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ համերգասրահ ամբողջութեամբ լեցունող հայ եւ օտար երաժշտասէրներու խումբերամբ բազմութիւն մը:

Համերգին եւ յայտագրին մտայնացողը, ինչպէս նաեւ Կոմիտասի երաժշտութեան գրեթէ բոլոր մշակումները կատարուած էին տաղանդաւոր դաշնակահար եւ յորինող Սերուժ Գրաճեանի կողմէ:

Ընտրուած երգերը կը ներկայացնէին Կոմիտասի սէրը հանդէպ

գիւղի կեանքին եւ բնութեան նաեւ հարսանեկան ուրախալի երգեր եւ պարեր, ինչպէս նաեւ յորինումներ, որոնք նուիրուած էին երախաներուն:

Յայտագիրը կը սկսու Կոմիտասեան պատարագի կարգ մը շարականներով, բոլորովին օտարներէ կազմուած «Elmer Iseler Singers» երգչախումբի մեկնաբանութեամբ: Այս խումբը Գանատայի լաւագոյն երգչախումբներէն մին է, որ զանազան առիթներով հայկական ձեռնարկներուն հայերէն երգերով յաջողութեամբ իր մասնակցութիւնը բերած է:

Կոմիտաս իր ապրած շրջանին, ֆրանսացի յայտնի երաժշտագետ եւ յորինող Claude Debussy ի հետ առանձնապատու կապ մը ունեցած է: Claude Debussy ի վերջին գործը, ինչպէս նաեւ տեղահանութեան ժամանակ Կոմիտասի վերջին ստեղծագործութիւնը եղած են մասնակցութեամբ իր մասնակցութիւնը համար աղօթքներ:

Գեղարուեստական դեկավար Lydia Adams ի մականին տակ «Elmer Iseler Singers» երկսեռ երգչախումբի կողմէ մեկնաբանուեցաւ Կոմիտասի պատարագէն հետեւեալ շարականները: «Առաւօտ լուսաբեր», «Սուրբ սուրբ» եւ «գոհանամք»:

Երգերուն մեծամասնութեամբ իր մասնակցութիւնը բերաւ Գանատացի օփերայի նշանաւոր երգիչ՝ պարիթոն «ժուսօ» մրցանակի դափնեկիր Russell Braun: Երգչախումբը Կոմիտասի երկու պարերով հանդէս եկաւ, Երեւանէն պար մը «Երանկի» եւ Վաղարշապատէն պար մը «Շուշիքի» կտորներով:

Այս պարերուն իրենց մասնակցութիւնը բերին Համազգայինի «էրեւանի» պարիթոններ, գեղարուեստական դեկավար Նելլի Կարապետեանի աշակերտները, պարմանուհիներ Վանի Եագուպեան, Մարիա Մանուկեան, Լանա Տէր Պետրոսեան եւ Մեղեդի Կոստանեան:

Այնուհետեւ հանդէս եկաւ յայտնի «Amici» սենեկային նուագախումբը, մասնակցութեամբ գլխարինէթ Joaquín Valdepenas, Չուլթակ Mark Fewer, մեծ Չուլթակ (viola) Barry Shiffman, թաւջութակ David Hetherington եւ դաշնակահար Սերուժ Գրաճեան որ երգերուն կարգաւորումը կատարած էր եւ որ ուղղութիւն տուած էր երաժիշտներուն:

Յաջորդաբար ժողովրդական երգերով հանդէս եկաւ պարիթոն Russell Braun, որ «Amici» նուագախումբի մասնակցութեամբ երգեց «քելէ-քելէ», «Միրանի ծառ» եւ «Գարուն ա» երգերը: Ապա նաեւ Տիգրան Մանուրեանի «Qui tollis

peccata mundi», որ այս երգը 1915ի տխուր օրերու ոգեկոչումն էր:

Տաղանդաւոր օփերայի երգչուհի Լին Իշնար իր բացառիկ ձայնով ու անսայթաք մեկնաբանութիւններով հանդէս եկաւ, դաշնակի ընկերակցութեամբ Սերուժ Գրաճեանի: Ան գեղեցկօրէն մեկնաբանեց «Տլէ Եաման» կտորը: Յաջորդեց Սերուժ Գրաճեանի «From love song to lament ... Սիրոյ երգէն մինչեւ ողբ» եւ Կոմիտասի «Անտունի», մեներգութեամբ Russell Braun ի:

Նուագախումբի կողմէ մեկնաբանուեցան Claude Debussy էն երկու կտորներ «Petite piece, for clarinet and piano, L. 120 ...» եւ «Noel des enfants qui n'ont plus de maison ...» (Տուն չունեցող երախաներու ծննդեան տօնը): Այս երգին իրենց երգեցողութեամբ մասնակցութիւն բերին Գանատայի մանկական օփերայի ընկերութեան երախաներու երգչախումբը, երաժշտական տնօրէն եւ խմբավար Teri Dunn ի մականին ներգեւ:

Գարձեալ նուագախումբի եւ մանկական երգչախումբի մասնակցութեամբ Կոմիտասի «Մանուկներու Հայր Մեր» եւ «Հով առէք»



կտորները մեկնաբանուեցան: Այս վերջին երգին մէջ 1910 ին ձայնագրուած Կոմիտասի ձայնով երգեցողութիւնը ունկնդրեցինք եւ այս երգով յայտագրին առաջին մասը աւարտին հասաւ:

Միջնարարէն ետք յայտագրի երկրորդ մասը սկսաւ սայլի երգ «Ել էլ» եւ «Սարերի վրով» կտորներով:

Կրկին բեմ բարձրացաւ սփրանսօ Լին Իշնար, այս անգամ իր հոյակապ ձայնով եւ բացառիկ կերպով մեկնաբանեց «Չեմ կրնայ խաղալ», «Քելեր ցոլեր» եւ «Կուռնկ» ժողովրդական երգերը, որոնք մեծ տպաւորութիւն գործեցին հանդիսատեսներու վրայ արժանացան որոտընդոտ ծափահարութիւններու:

Մասնակցութեամբ «Amici» սենեկային նուագախումբի եւ Գանատայի մանկական օփերայի ընկերութեան երախաներու երգչախումբի կողմէ մեկնաբանուեցան «Անձրեւն եկաւ», «Ջան գառնուկ» եւ «Կաքաւիկ» երգերը:

Ապա հանդէս եկաւ պարիթոն Russell Braun: Ան իր գեղեցիկ ձայնով նուագախումբի եւ երգչախումբի մասնակցութեամբ մեկնաբանեց «Չինար ես», «Ախ Մարալ ջան», «Շողեր ջան» կտորները:

Կոմիտասի Հարսանեկան 5 երգերը «Սարէն կու գայ», «Էրում եմ», «Եար ջան արի», «էսօր Ուրբաթ» եւ «Առնեմ երթամ» մեկնաբանուեցան երգչախումբին կողմէ:

Որպէս վերջին կտոր խմբային երգուեցաւ «Հոյ նագան» կտորը, մասնակցութեամբ սփրանսօ Լին Իշնարի, պարիթոն Russell Braun ի, նուագախումբի, երգչախումբի եւ

«էրեւանի» պարախումբի պարմանուհիներու, որոնք ջերմօրէն գնահատուեցան ներկաներու կողմէ:

Կոմիտասի երգերու հրաշալի մեկնաբան ու երեկոյի կազմակերպիչ, տաղանդաւոր դաշնակահար Սերուժ Գրաճեան իր սրտի խօսքը արտասանեց հետեւեալ կերպով՝ «Միրեւիներ նախ ամենամեծ շնորհակալութիւն ձեզմէ ամէն մեկուն որ այսօր ներկայ գտնուեցաք Գանատահայութեան եւ Թորոնթոյի հայութեան համար պատմական այս իրադարձութեան: Կոմիտասի երաժշտութիւնը, Կոմիտասի երգերը ընդհանրապէս եղած են մեր ցաւի, տառապանքի, մեր արցունքի, թախիծի, ցասումի եւ մեր կորուստի եւ խորհուրդանիշները, բայց այսպիսի ատեններ Կոմիտասը, երաժշտութիւնը, երգերը կը դառնան նաեւ մեր միասնականութեան եւ մեր սիրոյ եւ վերագարթնումի եւ վերապրումի, չարագործութեան դէմ ստեղծագործական կեանքով յաղթելու մեր ժողովուրդի բացառիկ կարողութեան խորհրդանիշ: Ճիշդ է այդ չարագործութիւնը կարողացաւ Կոմիտասի հանճարը, տաղանդը լուսնի, կարողացաւ իր հոգին եւ միտքը սպաննել, մտքի թուիչքը կասեցնել,

բայց Կոմիտասեան երգերու, Կոմիտասեան երաժշտութեան անլուելի գանգակատունը յաւերժ պիտի ղօղանջէ եւ որեւէ մէկ ոչ թէ չի կարողանար կասեցնել այս երթը դէպի յաւերժութիւն: Մեզի պարգապէս կը մնայ տէր կանգնիլ այս ժառանգութեան: Միրենք եւ նոյնքան կարեւոր է սիրցնել նաեւ օտարներուն այս ժառանգութիւնը եւ այս մշակոյթը արժեւորել նաեւ օտարներու միջոցով: Այս փառաւոր բեմը վկայ է որ հայ մշակոյթը, հայ երաժշտութիւնը հաւատացէք թերեւս փոքր բայց կարեւոր տեղը ունի համաշխարհային մշակոյթներու գանձարանին մէջ: Կոմիտաս վարդապետի ամբողջ կեանքը եղաւ նուիրում առ Հայաստան եւ հայութիւն: Իր ներշնչումը եղան հայութիւնը եւ Հայաստանը: Այս վերջին երգը կը կոչուի «Հայաստան երկիր դրախտավայր»: Գրաճեանի այս խօսքերը ջերմ գնահատանքի արժանացան:

Որպէսզի կտոր երեկոյի մասնակցող բոլոր արուեստագետները բեմի վրայ հաւաքուեցան ու բացառիկ կերպով մեկնաբանեցին «Հայաստան» կտորը որ մեծ ոգեւորութիւն ստեղծեց սրահին մէջ, յոսնկայս բուռն ծափով յոյներու արժանանալով:

Թորոնթոյի երաժշտասէրները այս եզակի ձեռնարկով հնարաւորութիւն ունեցան տօնախմբելու ազգային երգահան, յորինող մեծն Կոմիտաս Վարդապետի յիշատակին նուիրուած այս բացառիկ համերգը որ անմոռանալի ու անջնջելի պիտի մնայ բոլորին սրտերուն մէջ:

Մարդու Աչքերը եւ Բնաւորութիւնը

Մեծ աչքեր. նման աչքեր ունեցողները ի ծնէ առաջնորդներ են՝ առնական, խելացի, շփուող, արթիւթիք: Անոնց յատուկ է իշխանութեան ձգտումը, անոնք միշտ յատակօրէն գիտեն, թէ ինչի կը ձգտին, զանոնք կ'առանձնացնէ ապշեցնող աշխատունակութիւնը: Իբրեւ կանոն, մեծ աչքերով մարդիկ բաց են շրջապատի հետ շփման համար, անկեղծ են եւ բնական իրենց զգացումներու դրսեւորումներուն մէջ: Եթէ աչքերը անհամաչափօրէն խոշոր են, յատկապէս՝ կարուկ դիմագիծերու եւ լայն յօնքերու համադրութեամբ, ատիկա կը խօսի միւսներուն իշխելու ցանկութեան եւ խստութեան մասին:

Դուրս ցցուած խոշոր. դուրս ցցուած խոշոր աչքերը կը խօսին իրենց տիրոջ առաջնորդի յատկանիշներուն եւ ողջմտութեան մասին՝ յատկօրէն արտայայտուած զգայունութեան հետ: Նման աչքերով տղամարդիկ կ'առանձնանան ուժով, խաղալին կիրքով եւ յաւակնութիւններով: Գեղեցիկ սեռի ներկայացուցիչներուն յատուկ է շփուողականութիւնը, տիրականութիւնը: Միաժամանակ նման կիներ հակուած են թեթեամիտ եւ չկշռադատուած արարքներ կատարելու, չափազանցուած վտանգի դիմելու: Կլոր. աչքերու նման ձեւը կը խօսի ճանաչման ծարաւի եւ յաջողութեան ձգտման մասին: Ճիշդ է, խոշոր աչքեր ունեցողներու պատասխանատուութիւն ստանձնելու ցանկութիւնը յաճախ անոնց կը խանգարէ հասնելու փառքի գագաթին: Նման մարդիկ կ'առանձնանան բռնկունութեամբ, բայց, չնայած ատոր, անոնց բնորոշ է վրիժառուութեան ձգտումը, որովհետեւ անոնք արագ կը սառնին:

Լայն բացուած կլոր աչքերը կը խօսին անսովոր անկեղծ եւ բռնկուն բնաւորութեան մասին: Նշաձեւ. Աչքերու նման ձեւը կը վկայէ անոնց տիրոջ նուրբ բնաւորութեան մասին: Նման մարդիկ կը պաշտեն արուեստը եւ կը գնահատեն ընկերութիւնը: Անոնք նուիրուած եւ զգայուն են, եթէ աչքերու արտաքին անկիւնները վեր բարձրացած են: Իսկ եթէ անկիւնները դէպի ներքեւ ուղղուած են, նման աչքերու տէրը մեկամաղձոտ է եւ կը սիրէ վիճիլ: Եթէ ներքին եւ արտաքին

անկիւնները նոյն գիծի վրայ են, կարելի է խօսիլ ինքնավստահութեան, ինքնաբաւութեան, լուսթեան հանդէպ սիրոյ եւ հոգեկան հաւասարակշռութեան մասին:

Ներս ինկած. աչքի նման ձեւ ունեցողները կ'առանձնանան խոցելիութեամբ, հաւասարակշռութեամբ:

Անոնք չունին ձգտումներ, բայց հրաշալիօրէն կը կողմնորոշուին նիւթական հարցերու մէջ, իրենց հայեացքներուն մէջ պահպանողական են եւ գիտեն ինչպէս վարուիլ դրամի հետ: Անոնք կը վերլուծեն ամէն ինչ, չեն խօսիլ իրենց խնդիրներուն մասին, ցոյց չեն տար իրենց ապրումները: Եւ չնայած խորինկած աչքերու տէրերը շրջապատին կը վերաբերին որոշ զգուշութեամբ, միշտ պատրաստ են օգնութեան հասնելու անոնց, որոնք ունին ատոր կարիքը:

Շիւ. աչքերու նման ձեւ կը դիտարկուի սրտաբաց, բարի եւ հանդուրժող մարդոց մօտ: Լաւատեսութիւն, քաջութիւն, ինքնավստահութիւն. այս որակներն են, որոնք կը նպաստեն անոնց յաջողութեան: Շիւ աչքերով մարդիկ հակուած են արկածախնդրութեան, որ անոնց յաճախ կը ստիպէ չմտածուած արարքներ կատարել:

Վեր բարձրացած արտաքին անկիւններով. նման աչքերով մարդոց կ'առանձնացնեն մեծահոգութիւնը, յամառութիւնը, ընկերային յարաբերութիւններ ստեղծելու եւ երեխայ դաստիարակելու հիանալի հմտութիւնները: Նման աչքեր ունեցողներուն կ'ուղեկցի ասպարէզի յաջողութիւնը, քաջութիւնը եւ ստեղծագործելու հակումը, բայց ատիկա անոնց չի խանգարեր ազատ ըլլալ եւ պատրաստ որեւէ գործողութեան՝ յանուն »համեղ« պատասխի:

Ցած իջած արտաքին անկիւններով. աչքերու նման ձեւը կը ստեղծէ տիրութեան զգացում, բայց անոնց տէրերը, ընդհակառակը, ուշադրութիւն կը գրաւեն մեծ լաւատեսութեամբ եւ չափազանց մեծ բարութեամբ: Անոնք աւելի հակուած են հոգ տանելու մտերիմներուն, քան՝ իրենք իրենց: Անոնց յատուկ է վճռականութիւնը եւ հմայքը, բայց անոնք չեն կրնար ճիշդ դնել առաջնահերթութիւնները, որուն հետեւանքով անընդհատ կը լուծեն ուրիշին խնդիրները:

Առողջապահութիւն Ուտելիքի Զգայնոտութիւնը-Allerg

Կարգ մը փոքրիկներ ուտելէ ետք կը զգան սիրտխառնուք, քերուշուք կամ որեւէ այլ անկանոնութիւն: Մնողքը գինք կ'ուղղեն զգայնոտութեան-allergy մասնագէտի: Կարգ մը քննութիւններ կատարելէ ետք մասնագէտ բժիշկը կը կազմէ ուտելիքներու ցանկ մը, որ կը պարունակէ փոքրիկին համար արգիւտուած ուտելիքներ, որոնք կը համարուին զգայնոտութեան պատճառը: Հարցը կը բարդանայ, երբ կարգ մը փոքրիկներ նոյնիսկ բժիշկին ցուցմունքներուն հետեւելէ ետք դարձեալ ցոյց կու տան զգայնոտութեան նշաններ: Կը կատարուի երկրորդ քննութիւն եւ յայտնի կը դառնայ թէ զգայնոտութեան պարագան կարծուածէն աւելի բարդ է: Արգիւտուած ուտելիքներու ցանկը կը մեծնայ:

Հարցը հոս այն է, որ կարգ մը քննութիւններ ճիշդ արգիւնքները

չեն տար: Սխալ քննութիւն կատարելու պարագային մենք կը ստանանք սխալ ախտորոշում: Հազարաւոր մարդիկ իրենք գիտենք հեռու կը պահեն կարգ մը ուտելիքներէ սխալ ախտորոշում կատարելէ ետք:

Մասնագէտներ կը յայտնեն թէ շատ մը պարագաներու մանկաբույժը անձանօթ է այս սխալներուն: Այս քննութիւնները 20 տարիէ ի վեր կ'օգտագործուին: Սխալ ախտաճանաչման պատճառով շատ մը երեխաներ կ'ունենան ճնշուած-stressed կեանք մը: Երեխաներ եւ անոնց ծնողները կ'ըլլան անհանգիստ-anxious, սխալ ուտելիք չուտելու եւ կ'ըլլան միշտ զգոյշ արգիւտուած ուտելիք չուտելու համար: Ախտորոշումը պէտք է կատարուի ճիշդ ձեւով մարդոց կեանքին մէջ յաւելելով բարդութիւններ չստեղծելու համար:

Օգտակար Խորհուրդներ Միզուղիներու Դանակարգը Մաքրելու Դանար

- Իրարու խառնել հաւասար չափով՝ առանց կուտերու աղացած կիտրոն (կեղեւի հետ միասին), մեղր եւ ձիթապտուղի իւր: Պահել սառնարանի մէջ եւ խմել երիկամունքներուն մէջ աւազահատիկներ ըլլալու պարագային՝ մէկական ճաշի դգալ՝ օրը 3 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ:

Երիկամունքներուն մէջ քարի գոյութեան ժամանակ՝ 10 թէյի դգալ թրթնուկի սերմերուն վրայ լեցնել 1 լիթր »կապոր« տեսակի գինի, թրմել 3 օր: Խմել ուտելէն 30 վայրկեան առաջ՝ օրը 3 անգամ, մէկական թէյի դգալ: Պարունակութիւնը օգտագործելէ առաջ ցնցել:

Մէկ ճաշի դգալ խնձորի մանրուած կեղեւին վրայ լեցնել 1 գաւաթ եռացած ջուր, թրմել 30-40 վայրկեան: Խմել երիկամունքներու բորբոքման ժամանակ՝ օրը 3 անգամ, գաւաթի 1/3 մասը, ուտելէն 30 վայրկեան առաջ: 50 կր. ընկոյզի միջուկը մանրելով փոշիացնել, վրան լեցնել 1 գաւաթ կաթ, եփել, ձգել, որ սառի: Խմել օրուան ընթացքին: Օգտակար է երիկամունքներու հիւանդութեան ժամանակ:

Դժուարամիզութեան պարագային՝ օրը 3 անգամ, ուտելէն 30 վայրկեան առաջ ընդունիլ ջրոսպի փոշի՝ վրայէն ջուր խմելով: Երի-

կամային եւ լեղապարկի քարերու պարագային շատ լաւ օգտագործել ճակնդեղի, վարունգի, ստեպլինի հիւթերու խառնուրդը (1:1,5:2 յարաբերութեամբ):

Ամէն անգամ միզապարկի թուլութեան պարագային պատրաստել այս չափաբաժինը՝ 100 կրամ ուրցի սերմին վրայ լեցնել 1 լիթր չոր սպիտակ գինի, թրմել 1 ամիս՝ մութ, զով տեղ, պարբերաբար ցնցել հեղուկը: Խմել երիկամային, միզաքարային հիւանդութիւններու ժամանակ, սրտխառնոցի պարագային՝ իբրեւ միզամուղ՝ 50 կր., օրը 3 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ: Անոնք, որոնք որոշած են ազատիլ միզապարկի քարերէն, պէտք է ամէն օր խմեն սոխի թուրմ: Ապակեայ շիշը կէս չափով լեցնել մանրուած սոխով, մինչեւ վզիկը աւելցնել ալքոլ կամ օդի եւ 12 օր դնել տաք տեղ կամ արեւի տակ: Ապա քամել եւ խմել մէկ ճաշի դգալ, օրը 2 անգամ՝ ուտելէն 30 վայրկեան առաջ:

Իսկ Կենատի Մալխոպը կ'առաջարկէ երիկամունքները մաքրել ձմերուկի եւ սեւ հացի օգնութեամբ: Եթէ անօթի էք, ձմերուկ կերէք, եթէ ծարաւ էք, ձմերուկ կերէք, եթէ շատ անօթի էք՝ ձմերուկ եւ սեւ հաց կերէք: Այս մաքրման ընթացքը կը տեւէ 2-3 շաբաթ:

Դեմքի Կնճիռներէն Ազատելու Տնային Միջոց

Եթէ դէմքին վրայ կնճիռներ նկատած էք, կրնաք պատրաստել հրաշալի դիմակ մը, որ կարճ ժամանակամիջոցի մը մէջ պիտի լուծէ այդ խնդիրը: Բացի պարզ եւ մատչելի ըլլալէն, այս դիմակը ամբողջովին բնական է եւ կը քաշէ մորթը: Ասիկա հրաշալի միջոց է հանդիպման կամ որեւէ երեկոյթի երթալէ առաջ օգտագործելու համար, քանի որ այս դիմակին արդիւնքը անմիջապէս կը նկատուի՝ անգամ առաջին օգտագործումէն ետք:

Բաղադրութիւն.- 1 ապուրի դգալ corn flour, 5 ապուրի դգալ թարմ քամուած ստեպլինի հիւթ, 1 ապուրի դգալ թթուասեր:

Պատրաստման եղանակը.- Կէս գաւաթ ջուրի մէջ լուծել corn flour-ը: Այնուհետեւ զայն լեցնել

փոքր կաթսայի մէջ եւ վրան աւելցնել 100 մլ եռացած ջուր ու եփել ցած կրակի վրայ այնքան ժամանակ, մինչեւ որ ստացուի խիտ զանգուած մը: Վերցնել կրակին վրայէն եւ ձգել որ սառնի, ապա աւելցնել քամուած ստեպլինի հիւթն ու թթուասերը: Լաւ խառնել ու քսել մաքուր դէմքին, եւ 25-30 վայրկեան պահել: Ապա տաք ջուրով լուսը դէմքը եւ քսել խոնաւցնող քսուք: Մնացած դիմակը պահել սառնարանը: Աւելի լաւ արդիւնքի հասնելու համար կարելի է դիմակը օգտագործել երեք օր անընդմէջ:

Այս դիմակը հրաշալիօրէն կը թարմացնէ դէմքը, կը հեռացնէ յոգնածութեան հետքերը եւ կնճիռները, իսկ մորթը կը քաշուի՝ դառնալով աւելի հարթ:

Ծննդեան 150-ամեակ

Շարունակուած էջ 15-էն

բոլորն ալ օտար երաժշտագէտներէ: «Եթէ Կոմիտաս գրէր միայն Անտունին, այդ էլ բաւական կը լինէր նրան խոշոր արուեստագէտ համարելու»:

ՏէՊԻՍԻ

«Ամէն անգամ որ ունկնդրեմ Կոմիտասի Պատարագը, կը հոգեփոխուիմ, կը վերանամ: Իր Պատարագը գլուխ գործոց մըն է»:

ԼԻՒՔ ԱՆՏՐԷ ՄԱՐՍԵԼ

«Անբեւակայ լիօճն դժուարին ձեռնարկ մըն էր Կոմիտասի ստանձնածը: Անհուն համբերութեան, քաջութեան, սիրոյ գործ մը: Գիտունի, հանճարի գործ: Չեմ գիտեր թէ դուք հայերդ իր մեծութեան մէջ կ'ըմբռնէ՞ք Կոմիտասի գլուխ հանած աշխատանքը»:

ԼԻՒՔ ԱՆՏՐԷ ՄԱՐՍԵԼ

«Պեթովէնի իններորդ հա-

մանուակին վերջամասը ունկնդրած ատեն, յաճախ խաբկանքը կ'ունենանս փոխադրուելու Կոմիտասեան Հոռովելներուն»:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏ 1969

Եւ վերջապէս՝ «Ո՛վ կ'ըսէ թէ լեւները չեն քայլեր: Կոմիտասի համերգը շարժեց եւ մենք տեսանք զանոնք»:

ԱԼ ԱՀՐԱՄ ՕՐԱԹԵՐԹ, ԳԱՀԻՐԷ

Այո՛, Հայ ժողովուրդը սերունդներով Հարստացաւ Կոմիտասի ամենէն թանկագին երաժշտական գործերով: Անոնցմէ սերունդներ միշտ երգեցին, կ'երգեն ու պիտի երգեն վարդապետին զգայուն երգերը՝ Կուռնկը, Անտունին, Հոռովելը, Գարուն ա ձիւն ա արեւ, Հայաստան երկիր դրախտավայր, եւ այլ բազմամթիւ գեղարուեստի հարագատ գործեր որոնք անմահացուցին Կոմիտաս վարդապետը:

ՄԱՐԶԱԿԱՆ

Ռաֆայել Վահանեանը՝ Վետերանների Շախմատի Աշխարհի Ախոյեան



Հայկական շախմատի անուանի վետերանը մարզական իր հարուստ կենսագրութիւնում հերթական մեծ նուաճմանը հասաւ:

Բուխարեստում ակարտուած վետերանների շախմատի աշխարհի առաջնութեան ակարտական՝ 11-րդ տուրում 65-ից բարձր տարիքային խմբում հանդէս եկող Ռաֆայել Վահանեանն անչափ կարեւոր յաղթանակ տոնեց Յենս Քրիստիանսենի նկատմամբ ու վաստակած 8,5 միաւորով Անատոլի Վայսերի եւ Յուրի Բալաշովի հետ լաւագոյն արդիւնքը ցոյց տուեց:

Լրացուցիչ գործակիցների հաշուարկով Վահանեանը գերազանցեց մրցակիցներին ու արժանացաւ աշխարհի ախոյեանի տիտղոսին: Արժաթէ մետալը բաժին հասաւ Անատոլի Վայսերին, պրոնզէ մրցանակակիր դարձաւ Յուրի Բալաշովը: Առաջնութեան 3 մրցանակակիրներն էլ 3200-ական եւրօ պարգեւավճար ստացան:

50-ից բարձր տարիքային խմբում հանդէս եկող Կարէն Մովսիսեանը վաստակած 8 միաւորով զբաղեցրեց 4րդ տեղը՝ պարգեւատրուելով 1800 եւրոյով: Յիշեցնենք, որ նա անցեալ տարի Սլովենիայի Բլեդ քաղաքում անցկացուած շախմատի աշխարհի վետերանների առաջնութիւնում նուաճել էր ախոյեանի տիտղոսը:

Արթուր Աւետիսեանը՝ Պրոնզէ Մետալակիր

Հայաստանի ներկայացուցիչ Արթուր Աւետիսեանը պրոնզէ մետալակիր դարձաւ Գերմանիայի Կոտբուս քաղաքում ընթացող սպորտային մարմնամարզութեան աշխարհի գաւաթի խաղարկութիւնում:



Օղակների վարժութեան եզրափակիչում Արթուր Աւետիսեանը երրորդ տեղ գրաւեց 14.833 միաւորով: Առաջին տեղը զբաղեցրեց 15.133 միաւոր վաստակած չինացի Լիու Եանգը, որը նուաճեց միակ օլիմպիական ուղեգիրն այս վարժութիւնում:

Օղակների վարժութիւնում Հայաստանի միւս ներկայացուցիչ Վահան Դաւթեանը 14.825 միաւորով գրաւեց 5-րդ տեղը: Յարութիւն Մերդինեանը նժոյգի թափեր վարժութեան եզրափակիչում վաստակեց 14.733 միաւոր եւ զբաղեցրեց 4-րդ տեղը:

Յենրիխ Միխայիլեանի Վերադարձը Յետաձգուում է

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականի աւագ Հենրիխ Միխայիլեանը չի մասնակցի իր թիմի՝ Հոմի «Ռոմայի» առաջիկայ հանդիպմանը:

Հոմիացիների գլխավոր մարզիչ Պաուլօ Ֆոնսեկան հայազգի ֆուտպոլիստին կրկին չի ընդգրկել թիմի նախնական կազմում: Պորտուգալացի մասնագէտն այդ կապակցութեամբ ասել է, որ Հենրիխ Միխայիլեանն արդէն մարզուում է թիմի հետ, սակայն դեռ պատրաստ չէ խաղին:



Յիշեցնենք, որ Հայաստանի հաւաքականը վնասուածքի պատճառով բաց է թողել ոչ միայն «Ռոմայի» բաժաթիւ խաղերը, այլեւ մեր ազգային թիմի վերջին 4 հանդիպումները:

Իտալիայի առաջնութեան 13-րդ տուրում «Ռոման» հիւրընկալեց «Բրեշիան»։ Պորտուգալացի Պաուլօ Ֆոնսեկայի գլխավորած թիմն առաւելութեան հասաւ 3:0 հաշուով:

«Ռոման» 25 միաւորով չորրորդ տեղում է: Երրորդ տեղում է 27 միաւոր վաստակած մալթաբաղաքային «Լացիոն», որն արտագնայ խաղում 2:1 հաշուով յաղթեց «Սասուոլոյին»:

«Լիվերպուլը» Դժուարութեամբ Յաղթեց «Քրիսթալ Փելասին»

Աւարտուեց ԱՊԼ-ի 13-րդ տուրի «Քրիսթալ Փելաս»-«Լիվերպուլ» հանդիպումը:

Գերմանացի Յուրգեն Կլոպի գլխավորած թիմն առաւելութեան հասաւ 2:0 հաշուով: Տանտէրերի կազմում կոլի հեղինակ դարձաւ Վիլֆրիդ Զահան, իսկ մերսիսայդեան թիմից աչքի ընկան Սուդիօ Մանեն եւ Ռոբերտօ Ֆիրմինոն:

Լիվերպուլցիները 37 միաւորով գլխավորում են մրցաշարային աղիւսակը:

«Մանչեսթեր Սիթի» - «Չելսի»՝ 2:1

Անգլիայի առաջնութեան 13-րդ տուրի կեդրոնական դիմակայութիւնում ախոյեան «Մանչեսթեր Սիթին» տանը մրցեց Լոնտոնի «Չելսիի» հետ: Կատալոնացի Խոսեպ Գուարդիոլայի ղեկավարած թիմն առաւելութեան հասաւ 2:1 հաշուով:

«Մանչեսթեր Սիթին» 28 միաւորով բարձրացաւ երրորդ տեղ, «Չելսին» նահանջեց չորրորդ տեղ՝ 26 միաւոր: Առաջատար «Լիվերպուլն» ունի 37, երկրորդ տեղում ընթացող «Լեսթեր Սիթին»՝ 29 միաւոր:

«Մանչեսթեր Յունայթեդը» 7 Րոպէում 3 Կոլ Խփեց, Սակայն Չկարողացաւ Յաղթել

Անգլիայի առաջնութեան 13-րդ տուրում «Մանչեսթեր Յունայթեդը» նորուեգացի Ուլե-Գունար Սուլշերի գլխավորութեամբ հիւրընկալվեց «Շեֆիլդ Յունայթեդին»: Գրանցուեց ոչ ոքի՝ 3:3:

Ընթացքում անգլիացի գլխավոր մարզիչ Կրիս Ուիլքերի ղեկավարութեամբ հանդէս եկող «Շեֆիլդ Յունայթեդը» յաղթում էր 2:0 հաշուով: Շոտլանդացի կիսապաշտպան Ջոն Ֆլեյլը 19-րդ րոպէին առաջ մղեց դաշտի տէրերին, 52-րդ րոպէին էլ կոլային փոխանցում կատարեց ֆրանսացի յարձակուող Լի Մուսեին, որը կրկնապատկեց հաշիւը:

Սակայն երկրորդ խաղակէստում մանչեսթերեան թիմը 7 րոպէում երեք կոլ խփեց՝ առաջ անցնելով հաշուի մէջ: Աչքի ընկան անգլիացի պաշտպան Բրենդոն Ուիլյամսը, անգլիացի յարձակուողներ Մեյսոն Գրինվուդն ու Մարկուս Ռեշֆորդը:

Վերջին րոպէին դաշտի տէրերին պարտութիւնից փրկեց շոտլանդացի յարձակուող Օլիվեր Մաքքարնիի կոլը՝ 3:3:

«Շեֆիլդ Յունայթեդը» 18 միաւորով բարձրացաւ 6-րդ Տեղ, «Մանչեսթեր Յունայթեդը» 9-րդն է՝ 17 միաւոր:

«Արսենալի» Ֆուտպոլիստները Չեն Յանկանում Աշխատել Էմբրիի Յետ

Լոնտոնի «Արսենալի» գլխավոր մարզիչ Ունաի Էմբերին, հնարաւոր է, առաջիկայում հեռացուի անգլիական ակումբի գլխավոր մարզիչի պաշտօնից:



The Telegraph-ի հաղորդմամբ՝ Պրեմիեր լիգայի 13-րդ տուրի՝ «Սաութհեմփթոնի» հետ խաղում միաւորներ կորցնելուց յետոյ «Արսենալի» ֆուտպոլիստները սկսել են դժգոհութիւններ յայտնել Էմբերիից:

Աւելի վաղ յայտնի էր դարձել, որ «Արսենալի» ղեկավարութիւնը ցանկանում է ակումբի գլխավոր մարզիչի պաշտօնում նշանակել սպանացի Լուիս Էնրիկէին, որն օրեր առաջ գլխավորեց Իսպանիայի ազգային հաւաքականը:

Նշենք, որ Պրեմիեր լիգայի 13-րդ տուրից յետոյ «Արսենալը» 18 միաւորով մրցաշարային աղիւսակի 8-րդ տեղում է:

«Բարսելոնան» Յաղթեց «Լեգանեսին» 2:1 Հաշուով

Ֆուտպոլի Իսպանիայի առաջնութեան 14-րդ տուրում ախոյեան «Բարսելոնան» հիւրընկալուեց «Լեգանեսին»: Իսպանացի Էնեստո Վալվերդի գլխավորած թիմը տարաւ կամային յաղթանակ 2:1 հաշուով:



Առաջինը յաջողութեան հասան դաշտի տէրերը: Երկրորդ խաղակէստում հաշիւը հաւասարեցրեց ուրուգուացի յարձակուող Լուիս Սուարեսը, որին կոլային փոխանցումը կատարեց արժենթինացի յարձակուող Լիոնել Մեսին: Կատալոնական թիմի յաղթական կոլը խփեց չիլիացի կիսապաշտպան Արտուրօ Վիդալը:

«Բարսելոնան» 28 միաւորով առաջին տեղում է: Մեկ հանդիպում քիչ անցկացրած Մադրիդի «Ռեալը» հետ է 3 միաւոր: «Լեգանեսը» վերջինն է՝ 14 միաւոր:

Նուարդ Գասէմճեանի Յիշատակին

Հրաչ Զիլինկիրեանի խօսքը արտասանուած անոր թաղման արարողութեան ընթացքին

Մահը՝ քրիստոնեայ հաւատացեալին համար, ինչպէս Նուարդ Գասէմճեանը իր գորաւոր հաւատքով հաւատաց, նոր սկիզբ մըն է, Աստուծոյ լոյսերու մէջ յաւիտենական կեանքի մը սկիզբը: Հայերէնով գեղեցիկ բառ մը ունինք՝ յուղարկաւորութիւն, այսինքն՝ ուղեւորութիւն դէպի յաւիտենական կեանք: Հետեւաբար, եկած ենք «բարի ճանապարհ» ըսելու Նուարդ Գասէմճեանին: Յուզուիչ պահ է բոլորիս համար. դժուար է մանաւանդ իր գաւազներուն՝ մայր կորսնցնելու իրականութեան հետ հաշտուելու, բայց մենք նաեւ մէկտեղուած ենք «տօնախմբելու» իր կեանքը, որ յաջողութիւններով, համայնքային կեանքի ներդրումներով եւ լաւատեսութեամբ լեցուն է:

Նախ եւ առաջ՝ վեց գաւազներու մայր ըլլալ ինքնին հերոսութիւն է: Իր գաւազներուն հարագատ մօր կաթին հետ իւրաքանչիւրին տուած է անհուն սէր, գուրգուրանք, մարդկային ու քրիստոնէական արժէքներ, եւ յատկապէս մեր ազգային եւ համայնքային կեանքին ծառայելու եւ նպաստելու ոգին:

Նուարդ Գասէմճեանը մօրս տարեկից եւ գաղափարակից էր: Յեղասպանութենէն վերապրողներուն այդ առաջին սերունդը, ազգային պահանջատիրութեան եւ արդարութեան գաղափարներով սոգորուած, ոչ թէ միայն հերոս



մայրեր եղան իրենց ընտանիքներուն մէջ, այլ նաեւ նետուեցան ազգաշինութեան եւ հայակերտումի սուրբ գործին. իրենց գաւազներէն անդին՝ իւրաքանչիւր հայ երիտասարդ իրենց համար հարագատ գաւազ էր: Ապրեցան, պայքարեցան եւ իրենց ներդրումը ունեցան թաղային, միութենական ու կուսակցական կեանքի մէջ, եւ մանաւանդ՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ պայծառութեան ի նպաստ իրենց ծառայութեամբ:

Նուարդ Գասէմճեանը իր բարի, բայց ներքին ուժով օժտուած տիպար կ'իւն, մայր, ծառայատէր եւ գործնական տիպար հայուհի մըն էր: Իր կեանքը ապրեցաւ բարութեամբ ու լաւատեսութեամբ: Թող իր բարի օրինակը բոլորիս համար ըլլայ ուղեցոյց եւ իր բարի յիշատակները մխիթարանք՝ իր գաւազներուն եւ համայն գերդաստանին:

Ճորճ Գամպէրեանի Յիշատակին

Ճորճ Գամպէրեանը «Նոր վերնատուն» ակումբի հիմնադիրներէն էր, նաեւ մինչեւ իր հիւանդութեան յառաջանալը գործուն անդամներէն մէկը:

2019 թիւը աղետաբեր եղաւ «Նոր վերնատուն»-ի համար. կորսնցնուցինք նախ Փայլակ Ահարոնեանը եւ Կարպիս Պալըքճեանը, եւ ահա հիմա Ճորճ Գամպէրեանը: Մինչ առաջին երկուքը աւելի ակնառու էին իրենց ազգային-ընկերային գործունէութեամբ՝ Ճորճ Գամպէրեանը ուրոյն տեղ կը գրաւէր տնտեսական ասպարէզին մէջ: Ըլլալով Գերմանիոյ մէջ ուսանած մեքենագէտ-եղեկտրագէտ, Ճորճ եղած է բազմաթիւ գործերու հեղինակ ինչպէս Սուրբիոյ ամբողջ տարածքին, այնպէս ալ քանի մը այլ արաբական երկիրներու մէջ, որոնց մասին Ճորճի պատմածները՝ ի թիւս այլոց, յատուկ հմայք կը հաղորդէին «Նոր վերնատուն»-ի հաւաքներուն, որով կը բացատրուէր բազմաթիւ այցելուներու մասնակցութիւնը այդ հաւաքներուն:


Մասնագիտականէն աւելի՝ Սուրբիոյ հայ համայնքին Ճորճ Գամպէրեան յայտնի էր իր ազգանպաստ գործունէութեամբ: Ան եղած է Հայկազի Լազար Նաճարեան դպրոցի բարերար եւ հոգաբարձութեան անդամ, մասնակցած է ՀԲԸՄ-ի Սպենդիարեան երգչախումբին: Ճորճ նաեւ հայ արուեստի եւ մշակութի սիրահար էր. օրին Հայկազի այցելած հայրենի գրողներու, արուեստագէտներու եւ մտաւորականներու շատերը հիւրընկալուած են Ճորճի տան մէջ՝ վայելելով անոր տիկնոջ՝ Սոսիի համադրամ կերակուրները. Ճորճ նաեւ պտտուցած է զանոնք Սուրբիոյ տեսարժան



վայրերը: Արուեստի նկատմամբ Ճորճի յատուկ վերաբերմունքի ապացոյց է սեղանատան կարասիի բոլորովին իւրատեսակ հաւաքածուն (բաղկացած մեծադիր սեղանէ, 12 աթոռներէ եւ պահարանէ մը), որ պատրաստուած է ըստ անուանի ճարտարապետ Սարգիս Պալմանուկեանի մտահղացման՝ Հայաստանէն յատուկ հրաւիրուած վարպետ փորագրիչներու կողմէ. հաւաքածուի իւրաքանչիւր կտորի վրայ քանդակուած փորագրութիւնները կը ներկայացնեն հայոց պատմութիւնը, հայ արքայները նկարագրող դրուագներ: Ճորճի ցանկութեան համաձայն հաւաքածուն նուիրուած է Հայաստանեայց եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան թեմին եւ տեղադրուած է Սբ. Յակոբ եկեղեցւոյ մէջ:

«Նոր վերնատուն» ակումբ ***** Ընկերոջ յիշատակին՝ «Նոր վերնատուն»-ը \$150 կը նուիրէ «Մասիս»-ի ֆոնտին

ՄԱՐԱԶԴ



ԳՐԻԳՈՐ ԱՅՇԱՐԵԱՆ 1930-2019

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսինին, հօր, մեծ հօր, աներին ու հարազատին Գրիգոր Աֆշարեանի մահը որ պատահեցաւ Փասստինայի Huntington հիւանդանոցին մէջ, Ուրբաթ 22 Հոկտեմբեր, 2019 առաւօտեան ժամը 5:00ին:

Հանգուցեալի եկեղեցական եւ թաղման կարգը տեղի պիտի ունենան Երեքշաբթի, Դեկտեմբեր 3ին կէսօրէ ետք ժամը 1:00ին Rose Hills Memorial Chapel-ին մէջ, 3888 Workman Mill Road, Whittier CA 90601:

- Սգակիրներ՝ Այրին՝ Տիկ. Մատլէն Աֆշարեան Տէր եւ Տիկ. Կրէկ եւ Debbie Աֆշարեան եւ գաւազուհի Տէր եւ Տիկ. Richy եւ Այտա Աֆշարեան եւ գաւազուհի Տէր եւ Տիկ. Մայք եւ Karen Serakides եւ գաւազուհի եւ համայն եւ հարազատները:

Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Լենինականի (Կիւմրի) Home Building Project-ին: Checks payable Armenian Evangelical Brethern Church (A.E.B.C.):

Բժիշկ Վարդան Թաշճեան

Շարունակուած էջ 13-էն

հեղինակը իբրեւ հայ մեր գոյատեւումը կը պայմանաւորէ հայ լեզուի եւ հայ դպրոցի պահպանութեամբ: Յաւով նշեց, թէ «ամիս մը առաջ յայտարարուեցաւ հերթական հայկական վարժարանի մը տարածքին փակումը մեր քիթին տակ, մեր աչքին դիմաց, մեր իսկ ձեռքով...»:

Բանախօսը, հեղինակին ուղղուած շնորհակալութեամբ եզրակացուց իր խօսքը, արժանանալով ջերմ ծափահարութիւններու:

Բժիշկ Թաշճեան բեմ գալով և՛ «ինձի բան մը մնա՞ց ըսելիք» հարցումով սրահէն խնդուք խլելէն ետք, շարունակեց. «Նախ և առաջ խորին շնորհակալութիւն բոլոր անոնց, որոնք առնչուեցան այս գիրքով՝ գաղթականութենէն մինչեւ բժշկութիւն: UCLA-ի հոգեբուժական ամբիոնի վարիչ-տնօրէն՝ James Simmons, օր մը իր ուսանողներուն այսպէս ըսաւ. «Տղաք, ուրախ կ'ըլլամ եթէ օր մը այցելէք անտուններու, կամ կարողաք անոնց մասին: Այս գիրքը կը խօսի այդ մասին: Ես ալ, կը կարծեմ, թէ զայն կարողալով ուրախ կ'ըլլամ: Սակայն այս գիրքը 365 էջեր ունի, ամէն օր մէկ էջ կարելով չէք ձանձրանար: Քանի-քանի անգամներ նշուեցաւ թէ հոս, այսօր տեղի կ'ունենայ գիրքի շնորհանդէս: Սակայն, միայն գիրքինը չէ, այլ նաեւ մեր բոլորին շնորհանդէսն է, քանի որ գիրքին մէջի անունները, նկարները, մանաւանդ պատմութիւնը, մեզմէ շատերուն մօտիկէն-հեռուէն ծանօթ է: Սակայն, ինձի համար ամենէն հետաքրքրականը, մանկութենէս ի վեր տարիներու երազի մը իրականացումը կը կատարուի այսօր: Միշտ երազած եմ, հաւանաբար դուք բոլորդ ալ, տեսնել մեր տարբեր գաղափարախօսութիւններով մարդոց և կազմակերպու-

թիւններու միասնական գործակցութիւնը: Եւ ահա ապիկ, մեր մշակութեան միութիւնները կը հովանաւորեն այս միջոցառումը: Մեր բոլորին ցանկութիւնն է, կ'ենթադրեմ, տեսնել նման միասնականութիւն աւելի յաճախակիօրէն: Մաղթանքս է ձեր բոլորի երազներուն իրականացումը: Շնորհակալութիւն»:

Տեղի ունեցաւ գինեձօնի արարողութիւն, ներկայ հոգեւոր հայրերու և մտաւորականներու մասնակցութեամբ:

Հանդիսութեան փակումը կատարեց, Հայ Կաթողիկէ համայնքին առաջնորդ, Արհի. Հայր Միքայէլ Եպիսկոպոս Մուրատեան, որ հեղինակին ու ներկաներուն ուղղուած յարգալից խօսքերէ ետք, շարունակեց. «Թաշճեան, թաշճի կը նշանակէ քար մշակող, շինարար: Վարդան Թաշճեանը, ոչ միայն իր կեանքի ընթացքին շինած է և աշխատած է մարդու ֆիզիքականը շտկելու, շինցնելու, այլ իր գրիչով մարդու միտքն ալ շինցնելու: Եւ այս գիրքը կը մարդկային որ բոլորդ ալ կարողաք, որ ոչ միայն պարզապէս անձի մը կենսագրականն է, այլ ամբողջ հայութեան մասին է: Այս գիրքը աղբիւրն է, որ մեզի կը բացատրէ և կը յուշէ այն ճամբան, որմէ անցած են մեր մեծ հայրերն ու մեծ մայրերը, որպէսզի մենք, իրենց յաջորդող երրորդ, չորրորդ և աւելի սերունդները Յեղասպանութենէն վերջ, բարձր ճակատով ապրինք այս աշխարհի վրայ: Պահենք մեր հայութիւնը, ապրինք մեր քրիստոնէութիւնը և հակառակ մեր բոլոր դժուարութիւններուն, միշտ բարձր ըսենք, որ Հայը կայ և պիտի մնայ: Գրիչդ դալար, վարձքդ կատար»:

Աւարտին, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Համադրեց՝ ՍԱՐԳԻՍ ՄԱՃԱՌԵԱՆ

SOLD OUT



Gala

2ND ANNUAL

SUNDAY, DECEMBER 8, 2019

4:30PM Reception | 6:00PM Dinner & Program
The Beverly Hilton | Beverly Hills, California

DISTINGUISHED HONOREES OF THE 2ND ANNUAL GALA



Paul R. Ignatius
Former U.S. Secretary of Navy &
U.S. Assistant Secretary of Defense




Kathryn Barger
Los Angeles County Supervisor
5th District



Kenneth L. Khachigian
Brownstein Hyatt Farber Schreck
Senior Partner

Hundreds of supporters, community leaders, and public officials are expected to attend the 2nd Annual Armenian American Museum Gala on Sunday, December 8, 2019. The signature event of the year will celebrate and support the landmark project as it approaches its historic groundbreaking year.



FOR MORE INFORMATION | WWW.AAMGALA.ORG | (818) 644-2073
BUILDING TOGETHER. LEAVING A LEGACY.

